Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.

ՆՈՐԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՅԵԼԻ

Կենսագրական վեպ

Երևան-2014
ՆՏ Հոլդինգ

ՀՏԴ 891.981-31 Բեգլարյան
ԳՄԴ 84Հ-44
Բ 312

ԲԵԳԼԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
Բ 312 ՀԱՅԵԼԻ: Կենսագրական վեպ/ Ն. Բեգլարյան.- Եր.: ՆՏ Հոլդինգ, 2014.- 60էջ:

ՀՏԴ 891.981-31 Բեգլարյան
ԳՄԴ 84Հ-44

ISBN 978-99941-808-0-6

© ԲԵԳԼԱՐՅԱՆ Ն., 2014
© ՆՏ Հոլդինգ, 2014

Նոյյան Տապան

Նվիրում եմ եղբորս՝
Գ.եղամ Միրզոյանի հիշատակին

Բարև ձեզ: Այս գրքի հերոսը ես չեմ, հերոսները ինձ շրջապատող մարդիկ են, որոնց շատ եմ սիրում: Ես մի ֆիլմում լսեցի մի արտահայտություն, որից հետո որոշեցի գիրք գրել: Հնարավոր է, որ չունեմ փորձ, հետևաբար, եթե դուք գեղեցիկ պատկերազարդումներով գիրք եք ցանկանում կարդալ, խորհուրդ կտայի Բաֆֆու «Սամվելը»: Երբեք չկարողացա այդ գիրքը վերջացնել: Չեմ կարծում, որ շատերին կնվիրեմ այս գիքը, որովհետև այստեղ ես լինելու եմ չափազանց անկեղծ: Չմտածեք, թե կյանքում անկեղծ չեմ, ուղղակի գրքում անկեղծ եմ լինելու իմ անձնական կյանքին վերաբերող պատմություններում… Մեկ ֆիլմում լսեցի հետևյալը. «Եթե ուզում ես ցավից ազատվել, ուրեմն կամ պետք է գիրք գրես, կամ մեռնես», իսկ քանի որ սիրտս մի տեսակ գիրք գրել ուզեց՝ որոշեցի մի քիչ ուշ՝ մի 70 տարի հետո մահանալ… Եվ այսպիսով, սկսենք սկզբից…

Երբեմն բոլորիս էլ պետք է առանձնանալ ինքներս մեզ հետ, և միայն այդ ժամանակ կարող ենք հասկանալ, թե ով ենք մենք... այդքան շատ են կերպարները, որ մենք ընդունում ենք օրվա ընթացքում. ո՞րն է մեր իրական կերպարը: Շատ մարդիկ ասում են, որ իրենք իրենց միշտ պահում են այնպես, ինչպիսին կան, իսկ ես վստահաբար ասում եմ, որ նրանք ստում են: Կբերեմ երկու օրինակ և կսահմանափակվեմ. ոչ բոլոր մարդիկ են իրենց պահում այնպես, ինչպիսին կան, երբ ասենք իրենց տնօրենը հետևում է իրենց աշխատանքին, ոչ

բոլորն են իրենց նման, երբ զրուցում են օրենքի մարդկանց հետ: Բազմաթիվ օրինակներ դուք ինքներդ կարող եք հիշել՝ կախված ձեր կյանքի փորձից և մարդկանց հետ շփումներից:

Թեմայից շեղվեցի, ինքս ինձ հետ որոշել եմ մենակ մնալ այս պարբերության մեջ հասկանալու համար, թե ո՞վ եմ ես իրականում:

-Մենա՞կ մնաս:

-Դու ո՞վ ես:

-Ես ով եմ... չգիտեմ, թե ինչպես բացատրել, բայց տեսակաբորեն ես դու եմ, դու էլ՝ ես:

-Որտեղի՞ց հայտնվեցիր:

-Երբ դու ծնվեցիր: Ես միշտ եղել եմ քո կողքին ու բոլոր հարցերում, բառացիորեն բոլոր հարցերում քեզ օգնել եմ: Ես ու դու մի ամբողջություն ենք:

-Լավ, բայց արի իրար անուններով դիմենք, որ կարդացողն էլ հասկանա, թե մեզանից ով՝ որ մի ես-ի ներկայացուցիչն է:

-Համաձայն եմ: Ես կլինեմ Մոնը, որովհետև այդ կերպարը շատ սիրեցի, երբ նրա մասին կարդում էինք:

-Լավ, ես էլ կլինեմ… Կանը… ուղղակի Կան:

Մոն. -Այո, հիշում եմ, հանրահայտ դարպասապահ Օլիվեր Կանի խաղը շատ էիր հավանում:

Կան. -Մոն, արի զրուցենք: Ես հիմա դրա կարիքը շատ ունեմ…

Մոն. -Բայց դու մենակ չես:

Կան. -Գիտեմ ինչ ես ասելու… որ իմ կողքին այսքան մարդ կա, որ ինձ սիրողներն այդքան շատ են… բայց դու էլ գիտես, որ ինձ պետք է ոչ թե սիրեն, այլ հասկանան: Բայց իրականում ոչ ոք չի կարող ինձ հասկանալ, որովհետև այդ ապրումները հայտնի են միայն ինձ, քեզ և Աստծուն: Մեր ներսում ապրում-

ներց ժայթքող հրաբուխը միայն մեզ է այրում, վնասում, իսկ ինձ սիրող մարդիկ չեն էլ տեսնում, որ իրենց կողքին 20 բալանոց մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունենում:

Մոն. -Բայց չէ՞ որ հենց այդ երկրաշարժերի միջոցով ենք հասունանում:

Կան. -Իսկ մի՞թե մեզ պետք էր հասունանալ... մի՞թե ավելի լավ չէր, որ աշխարհում միշտ տիրեր մեր մանկական անմեղությունը, բարությունը, մտքերը և անհոգությունը:

Մոն. -Հանգստացիր, արի քննարկենք քեզ տանջող հարցերը, այլապես քո մեջ ոչինչ չի փոխվի: Քեզ տանջող ամենամեծ ցավը ո՞րն է: Անվանիր մեկ բառով:

Կան. -...Մեկ բառով... ցավը չեմ կարող մեկ բառով անվանել, դրանք մի ընդհանուր կծիկ են, որոնք կուտակվել ու ճզմում են սիրտս...

Մոն. -Լավ, այդ ցավերից ո՞րն է ամենաշատը ցավում:

Կան. -...Նա...

Մոն. -Նորից սկսեցի՞ր:

Կան. -Ոչ, չեմ սկսում, դու էլ գիտես, որ հիմա ոչինչ չեմ զգում Նրա հանդեպ, միայն ցավ:

Մոն. -Կան, իսկ ո՞րն է ցավի սկզբնաղբյուրը:

Կան. -Այն հրաշալի, նույնիսկ իդեալական պատմությունը, որը Նա թողեց իմ կյանքում:

Մոն. -Կան, բայց արի ժողովրդի լեզվով ասած՝ ծուռը նստենք, դուզը խոսենք:

Կան. -Ի՞նչ նկատի ունես:

Մոն. -Այն, որ դուք 2 տարի ընկերություն էիք անում, բայց նույնիսկ համբույր չունեցաք:

Կան. -Իրավացի ես... երևի հենց այդ էր ավելի գեղեցկացնում ամեն ինչ:

Մոն. -Բայց պատմիր սկզբից, չէ՞ որ գիրք գրելու որոշումդ հենց դրա համար էր՝ բոլոր ցավերդ տալ թղթին:

Կան. -Իրավացի ես, Մոն, սկսեմ իմ կյանքից: Հայրս պատերազմի ժամանակ մղվող մարտերում վիրավորվեց: Քանի որ բժշկությունը չուներ համապատասխան միջոցներ, որպեսզի օգնություն ցուցաբերեր, այդ իսկ պատճառով մեկնեցինք արտասահման: Այնտեղ ապրեցինք 6 տարի... որից 3 տարին գնացի մանկապարտեզ, իսկ 2 տարին՝ դպրոց: Ինձ ամեն տեղ շատ էին սիրում, միշտ տարբերվում էի բոլորից՝ ոչ միայն իմ մաշկի թխությամբ, այլ նաև գիտելիքներով և ընդունակությամբ, եթե անկեղծ լինեմ, ապա ավելի ճիշտ կլինի ասել, որ տեղացիները մեղմ ասած չէին փայլում խելացիությամբ: Տեղական պաղպաղակ. ես ավելի համեղ համերի համադրություն երբեք չեմ զգացել, պաղպաղակի համար կարելի է վերադառնալ, որ նորից զգամ այն: Ապրում էինք հանրակացարանում... Բայց այն ոչ մի կապ չունի մեր իրականության հանրակացարանների հետ:

Մոն. -Երանի այդ օրերին: Ես էլ եմ հիշում, ինչ հետաքրքիր էին անցնում, քրիստոնեա մարդկանց երեխաներ, բոլորը լի էին հետաքրքիր մտքերով, և ամեն օր ինչ որ բան էինք որոշում ու անում: Հիշո՞ւմ ես, երբ մի անգամ անձրևից հետո բոլորս որոշեցինք գնալ և անցնել ծիածանի տակով:

Կան: -Այո, հիշում եմ: Առաջին անգամ մոլորվեցինք, մենք նորմալ չէինք կարողանում մեր բնակավայրի անունը տալ: Այն հնչում էր այսպես՝ «Օբեռլյուբե»:

Մոն. -Դե 5 տարեկան երեխաները դժվար թե կարողանային այդքան լեզու ջարդել, առանց այդ էլ իրենց թլիկ բառերով:

Կան. -Այո, բայց մի վարորդ վերջապես հասկացավ և պատրաստակամություն հայտնեց տանել բոլորիս:

Մոն. -Իսկ մենք բոլորս հրաժարվեցինք, քանի որ մեզ սովորեցրել են երբեք օտարից նույնիսկ պաղպաղակ չվերցնել: Կան, բայց հիշու՞մ ես այդ մարդու դեմքը: Նա ստիպված գնաց մեր բնակավայր և ոստիկանների հետ վերադարձավ, որ մեզ տանի:

Կան. -Հրաշալի ժամանակներ էին դպրոցական տարիները, երբ դասաժամերը կարդում էի ու չէի համբերում, թե երբ պիտի լույսը բացվի, որ դպրոց գնամ, առաջին ժամ՝ լող, երկրորդ-երրորդ ժամ՝ արշավ, չորրորդ ժամ՝ ֆուտբոլ, հինգերորդ ժամ՝ մաթեմատիկա: Նոր տարին՝ երբ բոլորը ունեին կարմիր գույնի ֆիլտրով ռումբիկներ, և բոլորը մեծ շուքով էին պատրաստվում, մեծ անհատական հրավառությունով, ու ամենակարևորը ժպիտներով, Հելոինի տոները՝ երբ բոլոր մեծահասակները առանց բացառության խանութներից գնում էին մեծաքանակ քաղցրավենիք, իսկ փոքրահասակները խմբեր կազմած շրջում էին՝ սարսափելի կերպարներով, հետո թակում էին դռները, իսկ երբ մեծահասակներից մեկը բացում էր, բոլորը սկսում էին երգել նախօրոք ընտրված տոնական երգը: Տանտերը երգի ընթացքում պետք է բոլորի տոպրակների մեջ քաղցրավենիք լցներ: Կարելի է անվերջ հիշել բոլոր գեղեցիկ պահերը, այս ընթացքում իմ ամենաանհոգ տարիներն էին:

Մոն. -Իսկ հետո ի՞նչ եղավ:

Կան. -7 տարեկան էի, վերադարձանք հայրենիք, և ես ստիպված պետք է նորից գնայի առաջին և երկրորդ դասարաններ: Բայց տհաճ էր հայկական դպրոցը: Առաջին տարին ընտանիքով ապրեցինք գյուղում, որտեղ էլ գնացի առաջին դասարան: Այստեղ էլ գերազանցիկների շարքերում էի: Տարին ավարտելուց հետո ընտանիքով տեղափոխվեցինք քաղաք: Քաղաքում զգացի, թե ինչ էր նշանակում «նորեկ»: 8 տա-

րեկան հասակում մշտական երեխայական կռիվներ, ու առաջին անգամ ինձ մենակ զգացի: Չնայած երբեք չընկճվեցի, ինչպես պապիկս էր սիրում ասել, «դուխը տեղը աքլոր» էի: Փոքր հասակում իմ բոլոր մորաքրոջ տղաներին, ովքեր ինձնից տարիքով մեծ էին, վախեցնում էին, ասելով, որ քնեն, թե չէ ես կգամ ու իրանց ճակատները կկծեմ: Այդ մեթոդը միշտ էլ աշխատում էր, որովհետև բոլորն էլ զգացել էին իմ ատամների սրությունը, ի դեպ ասեմ, բոլորի ճակատներին այժմ սպի կա:

Մոն. -Կան, բայց դու ինչո՞ւ հաշտ չէիր ապրում բոլորի հետ, միշտ բոլորը պայքարում էին քո դեմ:

Կան. -Չգիտեմ, Մոն, երևի փորձ էի ձեռք բերում, որ մեծանամ ու այդ ժամանակ ավելի հեշտ լինի պայքարել աշխարհի դեմ…

Մոն. -Բայց այժմ քո հարաբերությունները ինչպե՞ս են քո մորաքրոջ տղաների հետ:

Կան. -Կարճ պատասխանեմ. առանց մտածելու կյանքս կտամ նրանց համար:

Մոն. -Լավ, շարունակիր, Կան, մենք կանգ առանք 8 տարեկան հասակիդ վրա:

Կան. -Մինչև 10 տարեկանս լրանալը ոչ մի արտառոց դեպք տեղի չունեցավ…

Մոն. -Այո… հիշում եմ այդ տարին…

Կան. -Հայրիկիս մոտ չարորակ ուռուցք հայտնաբերեցին… և մի քանի վիրահատություններ արեցին, բայց անօգուտ: Այդ ժամանակահատվածում մայրս հորս հետ հիվանդանոցում էր, իսկ ես ու փոքր եղբայրս ժամանակավոր ապրում էինք մորեղբորս տանը: Ես սկսել էի շատ վատ պահել ինձ, նյարդային, լարված ու հիստերիայի հասնող վիճակս ստիպեց ինձ անել այնպիսի արարքներ, որոնց համար ամբողջ կյանքս զղջում եմ…

Մոն. -Պետք է կարողանաս բաց թողնել, դրա մեջ է երջանկության գաղտնիքը…

Կան. -2 ամիս անց ինձ տեղեկացրին, որ հայրս շուտով դուրս կգրվի և կգա տուն, հետևաբար մենք կվերադառնանք մեր բնակարան: 3 օր անց մուտքի մոտ քեռիի մեքենան կանգ առավ, և հարևաններով օգնեցին հորս մեքենայից դուրս գալ… Ես էլ հարևանների հետ հայրիկիս օգնեցի, որ պառկի անկողնում: Մայրս անդադար լացում էր, և այդ լացը նման չէր սովորական հետվիրահատական անհանգստության հետևանքով առաջացած հուզմունքի: Հայրիկիս մնացել էր ապրելու ընդամենը 3 օր… իսկ ես մտածում էի, որ բժիշկները հրաշքներ են գործում… Գիտեք, կյանքում ոչ մեկին չեմ ցանկանա այդ սառը հարվածը և այն, ինչ կատարվում էր իմ ընտանիքի հետ: Գլխումս ամեն ինչ խառնվեց իրար, չէի կարողանում կենտրոնանալ, ինֆորմացիան իր մեջ այնքան ցավ էր պարունակում ու այնքան անսպասելի էր, որ ես նույնիսկ թուլությունից չէի կարողանում լացել… Գլխումս լռություն էր, աչքերիս առաջ մարդիկ գնում- գալիս, ամեն մեկը մի բանով էր զբաղված, միանգամից աշխարհը գլխիվայր շրջվեց… Ի՞նչ անեի: Որոշեցի Աստծուն դիմել, չէ՞ որ Սուրբ Գրքի մեջ գրված էր. «Քո ամեն ցավերը ես ինձ կվերցնեմ»: Գնացի իմ սենյակ, պատուհանից նայեցի երկնքին ու աղոթեցի. «Բարև, Հայր իմ, ես կյանքիս մեջ առաջին անգամ եմ քեզ մոտենում լուրջ խնդրանքով, որովհետև մինչ այս դու ինձ օգնել էիր նման ծնողների արժանացնելով: Մինչև հիմա իմ ամեն մի խնդրանքը կատարել են իմ երկրային ծնողները: Տեր իմ, առողջացրու հայրիկիս, ես փոխարենը քեզ խոսք եմ տալիս, որ երբ լսեմ, որ ինչ որ մի տեղ քեզնից են խոսում, կմիջամտեմ ու անունդ կփառավորեմ»: Աղոթքից հետո սիրտս թեթևացավ, զգացի Աստծո ներկայությունը, նույնիսկ ուրախությամբ լցվեցի… Անցավ մեկ ժամ…

Մայրս գնացել էր հիվանդանոց արձակուրդ վերցնելու… Հանկարծ վազելով ու շնչակտուր մտավ տուն, հայրիկիս հանեց անկողնու միջից, նստեցրեց տաքսի, ու նրանք գնացին: Բոլորը ապշահար մեկը մյուսին հարցնում էին, թե ուր գնացին, բայց ոչ ոք չգիտեր... Երեկոյան ետ վերադարձան: Մորս գունատ դեմքին երջանկության փայլեր էին նկատվում, իսկ ի՞նչ էր կատարվել…

Մայրս հիվանդանոցում է աշխատում, հիվանդանոց մտնելով՝ նստում է հատակին և սկսում ձայնով լաց լինել… Այդ պահին նրան է մոտենում մի կին ու հարցնում, թե ինչու է լաց լինում, մայրս պատմում է իր դժբախտության մասին, իսկ օտարականը մորս մի հասցե է տալիս և ասում. եթե ցանկանում ես ամուսնուդ փրկել, նրան տար այս հասցեով: Երբ մայրս հորս հետ մտնում են այդ բնակարան, այնտեղ տեսնում են մի կնոջ, ով զրույցից հետո խոստանում է բուժել հայրիկիս:

Անցավ մեկ ամիս… Հայրս առաջվա պես առողջ էր:

Իսկ նրան բուժող կինը ամիսներ անց անհետացավ, ասես ինչ որ մի երկրորդական դերասանի պես, որը պետք է լիներ ֆիլմի այդ հատվածում: Նրա մասին այլևս ոչ մի տեղեկություն չունեցանք… Համենայն դեպս տվյալ պահին ամենակարևորն այն էր, որ հայրս բուժվեց: Եվ այսուհետ քող ինչ որ մեկը ինձ մոտ խոսեր աթեիզմից:

Մոն. -Իրավացի ես, Աստված կա… Աստված ամենուր է… Իսկ «Հայր Մեր» աղոթքի հետ կապված այն պատմությունը հիշո՞ւմ ես:

Կան. -Ո՞ր մեկը:

Մոն. -Լսիր պատմեմ, ուրեմն մի պատանի որոշում է սկսել իր ամենօրյա աղոթքը, գնում է իր սենյակ և սկսում.

«-Հա՜յր մեր…

- Այո՜…

- Մի՜ ընդհատիր, ես աղոթում եմ:

- Բայց չէ՞ որ դու Ինձ կանչեցիր:

- Կանչեցի՞, Քե՞զ… Ես Քեզ չեմ կանչել, ես պարզապես աղոթում եմ: Հա՜յր մեր, որ երկնքում ես…

- Ահա՜, կրկին դու կանչեցիր Ինձ:

- Ինչ արեցի՞:

- Կանչեցիր Ինձ, ասացիր. «Հա՜յր մեր, որ երկնքում ես»: Ահա և Ես, ի՞նչ է պատահել:

- Ես ոչինչ էլ չէի ուզում դրանով ասել, ես պարզապես իմ ամենօրյա աղոթքն եմ անում: Միշտ այսպես եմ աղոթում: Մի տեսակ զգում եմ, որ պարտավոր եմ անել այն:

- Լա՜վ, շարունակի՜ր:

- Թո՜ղ Քո անունը սուրբ լինի…

- Մեկ րոպե… դու ի՞նչ նկատի ունես:

- Դե՛… դա նշանակում է… Որտեղի՞ց կարող եմ իմանալ՝ դա ինչ է նշանակում: Պարզապես աղոթքի մի մասն է: Իմիջիայլոց, ի՞նչ է դա նշանակում:

- Դա նշանակում է՝ մաքրեմաքուր, հրաշալի, փառավոր…

- Այ հիմա պարզ է: Մինչ այդ երբևէ չէի մտածել՝ ինչ է նշանակում «սուրբ լինի»:

Թո՜ղ Քո արքայությունը գա, թո՜ղ Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա:

- Դու իրականում ցանկանո՞ւմ ես դա:

- Իհա՜րկե, իսկ ինչո՞ւ ոչ:

- Իսկ ի՞նչ ես պատրաստվում անել այդ դեպքում:

- Անե՞լ… Երևի ոչինչ: Ուղղակի կարծում եմ, շատ լավ կլինի, երբ Դու ամեն բան Քո վերահսկողության տակ պահես այստեղ, ինչպես որ երկնքում է:

- Իսկ Ես ունե՞մ իշխանություն քեզ վրա:

- Դե՛... Ես եկեղեցի եմ հաճախում:

- Դա այն չէ, ինչ Ես հարցրի:

- Բավական չէ՞ ինձ մեղադրել: Ես ոչնչով վատը չեմ այն երեսպաշտներից, որ նույնպես եկեղեցի են գնում:

- Ների՛ր, բայց կարծում եմ, դու աղոթում էիր, որ Իմ կամքը լինի:

- Դե լավ: Կարծում եմ, մի քանի բանի վրա կարելի է աշխատել:

- Հիանալի՛ է:

- Տե՛ր, ես պետք է ավարտեմ աղոթքս: Սովորաբար այն այսքան երկար չէր տևում:

Հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր...

- Այո՛, իսկ դու անընդհատ անհանգստանում ես վաղվա օրվա համար:

- Մեկ բոպե. դա ի՞նչ է նշանակում: Ես այստեղ կանգնած փորձում եմ իրականացնել իմ կրոնական պարտականությունները, իսկ Դու անվերջ ընդհատում ես ինձ և հիշեցնում զանցանքներիս մասին:

- Գիտե՞ս, երբ աղոթում ես, մշտապես «վտանգ» կա, որ այն կավարտես լիովին փոխված: Դու կանչեցիր Ինձ, և ահա Ես այստեղ եմ: Շարունակի՛ր աղոթել:

- Ես վախենում եմ...

- Ինչի՞ց...

- Արդեն չգիտեմ՝ ի՞նչ կասես:

- Փորձի՛ր և կտեսնես:

- Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես և մենք ենք ներում մեր պարտապաններին...

- Եվ ինչպե՞ս են գործերդ ներման հետ կապված:

- Դեե՜... Ես չեմ կարող նրան ներել, Դու Ինքդ գիտես այդ մասին:

- Այդ դեպքում ո՞ւր մնաց աղոթքդ, ի՞նչ էիր աղոթում քիչ առաջ:

- Ես նկատի չունեի այն, ինչ աղոթում էի:

- Ուրեմն այսուհետ իմացի՜ր... եթե աղոթքիդ նպատակն Ինձ հետ զրուցելը չէ, այլ աղոթում ես, որովհետև հարկն է այդպիսին, ապա դա միայն կրոն է... և Ես այնտեղ չկամ...

Ես ականջ եմ դնում սրտին, այլ ոչ երբեք՝ խոսքերին...»:

Կան. -Շատ գեղեցիկ և ճիշտ պատմություն է: Մոն, իսկ հիշում ես, որքան շատ աթեիստների հանդիպեցինք մեր այս կարճ կյանքում: Ես չեմ կարողանում ընդունել, ավելի ճիշտ՝ հասկանալ այդ մարդկանց, ինչպես կարող է մարդ արարածը ոչնչի չհավատալ... Չհավատալ Աստծուն, նշանակում է չապրել, լինել ոչինչ:

Մոն. -Լինել ոչինչ... համաձայն եմ:

Կան. -Հիշո՞ւմ ես սատանայի հարձակումները:

Մոն. -Հիշում եմ, այո, որ մարդկանց միջոցով նա փորձություններին էր ենթարկում մեզ:

Կան. -Ոչ, ես այդ նկատի չունեմ: Հիշո՞ւմ ես այն զարհուրելի 3 գիշերները:

Մոն. -Ինչպես կարող եմ մոռանալ, թե ինչից սպիտակեց մազերս:

Կան. -Ես շատ փորձությունների ենթարկվեցի, բայց իմ հավատն առ Աստված կմնա անփոփոխ, կապ չունի, թե ով՝ ինչ կխոսի, մարդկային արարածի մտքում, իբրև խորը փիլիսոփայական միտք, ինչ կծագի: Ինձ դա ընդհանրապես չի հետաքրքրում: Իսկ այդ ամենը սատանային շատ զայրացրեց: Գիշեր էր...

Մոն. -Լուռ ու խաղաղ գիշեր…

Կան. -Ես իմ սենյակն ունեմ, ու բոլորից առանձին եմ քնում: Բոլորը քնած էին… Ես նույնպես… երբ հանկարծ արթնացա: Լռություն էր… Շրջվեցի պատի կողմը, աչքերս չփակվեցին, կարծես, քունս լրիվ առած լինեի: Երբ հանկարծ… ինչ որ մեկը հարվածեց ողնաշարիս: Ես շրջվեցի… ոչ ոք չկար: Շատ արագ վեր կացա անկողնուց, վազեցի սենյակներով, բայց բոլորը քնած էին: Առաջին բանը, որ մտքովս անցավ, դա այն էր, որ հաստատ ինձ թվաց:

Մոն. -Ամեն նորմալ մարդ այդպես կմտածեր, որովհետև հակառակ դեպքում քեզ կհամարեին աննորմալ, իսկ այդ ժամանակ ես չէի ուզում աննորմալ լինել:

Կան. -3 օր իրար հետևից նույն ժամին շարունակվելուց հետո ես հասկացա, որ իրոք աննորմալ եմ, բայց առավոտյան համոզվեցի, որ շտապել եմ եզրակացություն անել: Ես մեջքս ցույց տվեցի ընտանիքիս անդամներին և նրանք տեսան այդ հարվածների հետքերը: Հաջորդ օրը երազ տեսա… Մի մութ սենյակ էր, ավելի ճիշտ, չգիտեմ՝ սենյակ էր, թե ոչ, բայց օդը կանգնած էր, երկու աթոռ կար, մեկի շրջակայքը քիչ լուսավորված, իսկ մյուսը կատարյալ սև, որ նույնիսկ մթության մեջ էր երևում… Առաջին աթոռին ես էի նստած, մյուս աթոռին՝ չգիտեմ… կամ չար ուժ, կամ նույն ինքը՝ սատանան… Միայն նրա կարմիր աչքերն էին երևում: Երկխոսությունը երկար տևեց, բայց ես ամենակարևորներն եմ հիշում.

Սատանա. -Երկրպագիր ինձ:

Ես. -Եկել ես, որ ինձ հրամայես քեզ երկրպագե՞մ:

Սատանա. -Եկել եմ քեզ օգնեմ:

Ես. -Դու չե՞ս վախենում Աստծուց:

Սատանա. -Վա՞խ: Նայած, թե դու ինչ ես հասկանում



«վախ» ասելով: Ի՞նչ է այն: Վախ կորցնել այն, ինչ հիմա ունե՞ս: Ահա թե ինչն է վախը, դուք չեք կարողանում առաջ նայել, վախենում եք կորցնել, մի բանը փոխել մյուսով: Հարցնում ես, թե չե՞մ վախենում: Ոչ, չեմ վախենում, ես սարսափում եմ, ես գիտեմ, ինչ է նշանակում չլինել, դու շատ լսած կլինես, որ էներգիան փոխակերպվում է մեկ այլ էներգիայի, բայց իմացիր, դժոխքում ես կարող եմ վերացնել այդ էներգիան, իսկ ամենքի էներգիան, նույնիսկ իմ, կարող է վերացնել Երկրի Արարիչը: Ես վախենում եմ չլինել:

Ես. -Վախկոտ ջան, ի՞նչ էիր ասում: Երկրպագե՞մ քեզ:

Սատանա. -Եթե Աստված թույլ լիներ, այդ դեպքում ինձ կերկրպագեի՞ր:

Ես. -Ոչ:

Սատանա. -Ստում ես… Քո ասածը հենց դրան է բերում:

Ես. -Ամեն դեպքում, Աստված է ինձ ստեղծել, Նա է իմ Հայրը, թույլ, թե ուժեղ՝ կապ չունի, Նա է ինձ կյանք տվել, և ես հիմա ապրում եմ, և իմ ամբողջ կյանքով պարտական եմ Իրեն: Ես կվայելեմ ինձ հասանելիք կյանքը:

Սատանա. -Ի՞նչ կյանք: Քո կյանքը կյա՞նք ես անվանում: Եթե դու ինձ չընտրես, քո կյանքում դու երբեք ընկեր չես ունենա, երբեք ոչ մի կին քո կողմը չի նայի, ընտանիքիդ դժբախտությունները կշարունակվեն, դու մի օր մենակ կմնաս… ու կզղջաս, որ ինձ չես ընտրել:

Ես. -Լավ ես համոզում, բայց ոնց հասկացա, քեզ հասանելի չի այն ինֆորմացիան, թե ինչպես ազդես իմ հոգեբանության վրա: Դու ինձ ճիշտ չհասկացար, երբ ասում էի՝ կվայելեմ իմ կյանքը. նկատի ունեի այն հավիտենական կյանքը, որը Աստված է ինձ համար պատրաստել:

Սատանա. -Իսկ ի՞նչ գիտես, թե ինչպիսին է այդ կյանքը,

արդյո՞ք այն քեզ դուր կգա: Դու ապրում ես մի բանի համար, որը չես տեսել… Իսկ եթե այն քո պատկերացրածին չհամապատասխանի, ի՞նչ կասես այս դեպքում:

Ես. -Ամեն դեպքում ես չեմ կարող այն պատկերացնել, որովհետև իմ երևակայությունը շատ տկար է դրախտը պատկերացնելու համար, իսկ ինչ վերաբերում է նրա լավ և վատ լինելուն՝ Հայրը իր զավակի համար վատ բան չի պատրաստի: Ես ուզում եմ ապրել իմ Հոր պատրաստած կյանքում:

Սատանա. -Իսկ այս կյանքը քեզ չի՞ հետաքրքրում:

Ես. -Ի՞նչ նկատի ունես՝ հետաքրքրել ասելով: Չի կարող չհետաքրքրել:

Սատանա. -Նկատի ունեմ քեզ շրջապատող մարդկաց, նրանց, ում սիրում ես, չե՞ս ուզում օգնել:

Ես. -Ուզում եմ: Բայց միայն Աստծո կամոք և օգնությամբ:

Սատանա. -Եթե տեսնես՝ մեկը մահանում է, իսկ Աստված թույլ չտա, որ փրկես… դու ամեն դեպքում չե՞ս փրկի:

Ես. -Իմ կարծիքով, Աստված ֆիզիկապես ինձ վրա չի գործի, այսինքն, դեպքերը այնպես կդասավորի, որ անհնար լինի փրկել: Կփրկեի այն դեպքում, եթե հնարավոր լիներ, իսկ եթե Աստված ինձ հայտնվի ու հրամայի, որ չխառնվեմ, անկեղծ եմ ասում, չեմ խառնվի, Աստված իր գործը լավ գիտի:

Սատանա. -Մահից չե՞ս վախենում:

Ես. -Առաջ այո, վախենում էի, հիմա՝ ոչ… Պետք չի կյանքի ամեն մի դետալ սրտին մոտ ընդունել, ընդհակառակը՝ պիտի թեթև նայես, առաջ քայլես: Մահը նոր կյանքի սկիզբն է: Բացի այդ, մահացող մարդը, ով գիտի, որ սեփական կյանքը մի քանի րոպեից կամ օրից պիտի ավարտվի՝ ամենահեշտն է փրկվում: Չէ՞ որ կարող է ապաշխարել և գնալ Աստծո մոտ: Ի՞նչը կարող է խանգարել այդ պահին մարդուն:

Սատանա. -Ցավը:

Ես. -Մարմնի՞ ցավը: Չեմ կարծում, որ այն կարող է խանգարել թեկուզ մտովի ապաշխարելուն:

Սատանա. -Ոչ, մարմնի ցավը ոչինչ է համեմատած այդ պահին մտքի ցավի հետ, դուք՝ մարդ արարածներդ չեք կարողանում պահը ճիշտ գնահատել: Այդ պահին մարդկանց մեծամասնությունը մտածում է, թե որքան կիսատ գործեր թողեց աշխարհի վրա: Ու այդ ցավով մահանալով՝ նրան գրկում են դժոխքի կրակները, ու այդ պահին մտքի ցավը փոխակերպվում է վախի ցավի:

Ես. -Կարո՞ղ եմ հարցնել:

Սատանա. -Այո:

Ես. -Ինչու՞ ես դու հայտնվում մթության մեջ:

Սատանա. -Եթե ես մթության մեջ չհայտնվեի, դու ինձ չէիր հավատա, կամ ինչն ավելի ահավոր է, ինձ կընդունեիր որպես հրեշտակի:

Ես. -Բայց դու ժամանակին հրեշտակ ես եղել:

Սատանա. -Այո, գիտեմ…

Ես. -Չե՞ս կարոտում լույսը:

Սատանա. -Միայն խավարի մեջ լինելով կարող ես գնահատել լույսը:

Ես. -Ինչո՞ւ ետ չես գնում Աստծո մոտ:

Սատանա. -Ես անիծված եմ: Ես ունեմ իմ թագավորությունը:

Ես. -Եթե ես քեզ ընտրեմ, դու ի՞նչ կանես:

Սատանա. -Քեզ կդարձնեմ այն մարդը, ում մասին երազում ես:

Ես. -Հասկացա… Ապրես տվածդ գիտելիքների համար: (Այդ պահին ջղայնությունից նրա ամբողջ մարմինը կարմրեց):

Սատանա. -Այսինքն, դու ինձ չե՞ս ընտրում:

Ես. -Ոչ, ես իմ ընտրությունն արդեն կատարել եմ:

Նա գոռաց, և վայրկենապես մեծացավ չափսերով, մարմնից սկսեցին բոցեր դուրս գալ... մի ակնթարթ... և հարձակվեց վրաս, կարմիր աչքերը երբ հավասարվեցին իմ աչքերին, արթնացա: Աչքերս բացեցի ու մի քանի վայրկյան տեսա նրա աչքերը... Հետո դրանք անհետացան: Ամեն ինչ անցավ այն ժամանակ, երբ ես մկրտվեցի:

Մոն. -Իսկ ինչ ես կարծում, մկրտվելուց հետո սատանան հե՞տ քաշվեց:

Կան. -Իհարկե ոչ, նա ուղղակի կորցրեց մարմինը վնասելու իր կարողությունը, բայց որքան հավատդ մեծ լինի, այնքան մեծ փորձություններ են քեզ սպասում, հիշենք Հոբին, Աստվածաշնչում պատկերված են նրա փորձությունները, բայց նա չկոտրվեց և մնաց հավատարիմ, չնայած նրան, որ իր հարազատները բոլորը մահացան: Իմ համոզմունքն այն է, որ մահը ուղղակի միջոց է հավիտենական կյանքին անցնելու: Նկատած կլինեք, որ անհավատ մարդու թաղման ժամանակ մեծ սուգ է լինում, իսկ հավատացյալ մարդու թաղման ժամանակ բոլորը տխուր են, բայց գիտակցում են, որ այդ մարդը հիմա դրախտում է և վայելում է իր հավիտենական կյանքը: Բոլորս էլ մի օր պիտի մահանանք, և երբեք չենք կարող իմանալ, թե երբ կկտրվի կյանքի թելը, այդ իսկ պատճառով Աստծուն միշտ պիտի ունենանք մեր մեջ: Աստված սեր է:

(Ի դեպ, պատիվ ունեմ նշելու, որ մինչև 21 տարեկան հասակս 8 անգամ ինձ ընտրել են որպես կնքահայր, և ես համաձայնվել եմ):

Մոն. -Սեր... հիասքանչ զգացում:

Կան. -Լսիր, իսկ հիշու՞մ ես, որ սիրո հարցում, ավելի ճիշտ, մանկական սիրո հարցում շատ անհաջողակ էինք:

Մոն. -Արի ճշտում մտցնենք, ոչ թե սեր, այլ սիրահարվածություն:

Կան. -Լավ, թող լինի այդպես: Առաջին սիրահարվածություն... Ինչ լավ ժամանակներ էին: Ես 13 տարեկանում դպրոցից տեղափոխվեցի վարժարան և սովորում էի այնտեղ: Այդ ընթացքում նաև աշխատում էի գիշերային հերթափոխով: Ամբողջ գիշեր մտածում էի, թե ի՞նչ անեմ, որ նրա դուրը գամ, ինչպե՞ս սեր խոստովանեմ: Սիրային հարցում՝ ինչպես բոլոր այդ տարիքի պատանիները, ես ինձ դժբախտ էի զգում: Հիմա այդ ամենը հիշելով՝ ծիծաղ է առաջանում, բայց դե տարիքն է այդպիսին, ինչ արած: Պատկերացնո՞ւմ եք, ես 18 անգամ նրան սիրո խոստովանություն արեցի, և 18 անգամ էլ մերժվեցի: Ամեն անգամ մերժվելուց նորովի էի գույնս զգում, ավելի գունատ, քան նախորդ անգամ: Ընկերներս նայում էին դեմքիս ու հարցնում «Էլի՞»: Այո, և այդ շարունակվեց մինչև 18-րդ անգամը... Իսկ ի՞նչ էր կատարվել 18-րդ անգամ: Կատարվել էր այն, ինչի համար մինչ այսօր շնորհակալ եմ այդ աղջկան: Նա մերժեց ինձ՝ բացատրելով, թե ինչու է մերժում. Տեքստը, որը նա արտաբերեց, հիմնականում ասում էր, որ ես անհաջողակ եմ, ինձ մոտ ոչինչ չի ստացվում, ես նրա ճաշակով չեմ ու երբեք կյանքում ոչ մի բանի չեմ հասնելու: Եթե դու կարդում ես այս տողերը, ուզում եմ շնորհակալ լինել, որ դարձար առաջին պատճառը, որը ստիպեց ինձ առաջ գնալ: Չեմ ցանկանում այդ աղջկա ճակատագրի մասին պատմել, միայն կասեմ, որ ամոթից դրդված, նրանք ընդմիշտ մեկնեցին Հայաստանից (ես կապ չունեմ):

Մի գիշեր էր, սեղանին դրված էր մի թուղթ, գրիչ, մի տուփ ծխախոտ, կրակայրիչ և մոխրաման... Մտածում էի, կարելի է ամեն օրվա ամենահետաքրքիր պահերը և օրվա քաղաքս դա-

սերը գրել ինչ որ մի տեղ, որ հիշեմ: Մի խոսքով, կյանքի օրագիր ունենամ: Վերցրի թուղթն ու գրիչը և սկսեցի գրել այդ տարիքում ամենահետաքրքիր թեմայի մասին՝ կռիվների: Գրում էի, երբ նկատեցի, որ գրելուց հանգավորվում են տողերը, կենտրոնացա հանգավորման վրա, շարունակեցի, և ահա գրեցի առաջին անհասկանալի հանգավորված պատմությունը: Նայելով պատմությանը, մտածեցի. «Իսկ միգուցե փորձեմ ոտանավորներ գրել»…

Այո, լավ որոշում է, բայց ոտանավորները փողոցային ժարգոն չպետք է պարունակեն իրենց մեջ, իսկ իմ ոտանավորը այդպիսին էր: ԱՀԱ ԹԵ ԵՐԲ ԾՆՎԵՑ ՄԻՏՔԸ…

Իսկ միգուցե ռե՞փ: Ասում են, ձայնս էլ վատը չի, լավ տեմբր ունեմ, միգուցե ինձ փորձեմ այդ ասպարեզում: Այդ ժամանակ նոր էր ռեփը սկսել տարածվել, և երիտասարդությունը սիրում և լսում էր մեծ խանդավառությամբ, այդ թվում և ես: Առաջին գրված ստեղծագործությունը (եթե իհարկե կարելի է այն ստեղծագործություն համարել), որը անվանեցի «Էս քաղաքում», վերցրի և գնացի իմ նոր դասընկերոջ մոտ, որովհետև նա դաշնամուր նվագել էր սովորում. նա հետագայում պետք է դառնար իմ ամենամտերիմ ընկերը: Ինչ ճիշտը ճիշտ, կարդաց և չհավանեց: Ասաց, որ շատ գրեմ, իսկ ես գիտե՞ք ինչ պատասխանեցի.

Ես. -Եթե առաջին գրածս երգը երգ չդառնա, ես էլ երգ չեմ գրի:

Ընկեր. -Լավ, տուր, թող մնա ինձ մոտ, ես մի բան կմտածեմ:

Թուղթը վերցրեց և գնաց տուն, այնուհետև նա այդ թուղթը դնում է խոհանոցում և մինչ լոգարանից կվերադառնար այն ետ վերցնելու, նրա տատիկը ամբողջը կարդացած է լինում:

Երբ ընկերս տեսնում է թուղթը տատիկի ձեռքում, խնդրում է, որ ետ վերադարձնի, իսկ վերջինս պատասխանում է.

Տատիկ. -Մինչև չասես, էս ինչ կռիվների մեջ ես, ոչ մի թուղթ չես ստանա:

Ընկեր. -Տատի, էդ երգ ա:

Տատիկ. -Երգ չի: Քո կյանքի օրագիրն ա: Ես գտա քո կյանքի օրագիրը:

Ընկեր. -Վախ, Աստված իմ… Ալո, Նոր, մի հատ արի մեր տուն:

Երևի հասկացաք, դժվար այս դեպքից հետո այդ գրվածը շարունակեինք երգ անվանել:

Անցան տարիներ… 15 տարեկանում արդեն 1500-ից ավելի երգեր էի գրել, բայց ավելի ճիշտ, պարապել էի, որ կարողանամ երգ գրել: 15 տարեկանում գրեցի առաջին ԵՐԳԸ: Եվ բնականաբար այն պատմում էր իմ առաջին սիրահարվածության և երազանքների մասին: Երգը առաջին անգամ կատարեցի դասընկերուհուս ծննդյան արարողության ժամանակ: Երգը կոչվում էր «Ոչ մի օր»: Այն բարի մանկական երգ էր, որը շատ լավ ընդունվեց բոլորի կողմից: Ասեմ, որ այդ էլ շատ ոգևորիչ դեր խաղաց:

Վերջ: Որոշված էր: Առաջին երգը, որը պետք է ձայնագրվի, լինելու է այս երգը: Շատերին հետաքրքրում է, թե ինչո՞ւ NMG: Ինչ են նշանակում այդ երեք տառերը… Քանի որ ես իրոք չեի ուզում հայտնի դառնալ, բայց ուզում էի իմ ծառայությունը մատուցել, այդ իսկ պատճառով առաջ եկավ կեղծանունով հանդես գալու միտքը: Առաջին տառը՝ N տառը, իմ անվան սկզբնատառն է, կարծում եմ, այն ամեն դեպքում պիտի լինի, որովհետև անունը մեր անբաժան մասն է կազմում մինչ մահ և կարևոր դեր է խաղում ցանկացած մարդու կյանքում: Երկրորդ

տառը՝ M-ը, այն երկու քաղաքների սկզբնատառն է, որտեղ անցել է գրեթե ամբողջ կյանքս: Քաղաքները ձևավորում են մեր շրջապատը, իսկ շրջապատի ազդեցությունը մարդու վրա շատ մեծ է: Երրորդ տառը G-ն է: Այն շատ կարևոր դեր է խաղում, այն իմ երկրային և երկնային ծնողների սկզբնատառն է, անգլերեն թարգմանությամբ, Աստված՝ God: Իմ երգերում հայհոյանք երբեք չեք լսի: Այսքանն էլ իմ կեղծանվան հետ կապված… Մնում էր ձայնագրվել:

Բայց այդ տարիներին ձայնագրման ստուդիա գտնելը բարդ էր, գտնելու դեպքում էլ՝ շատ թանկ էր: Իսկ այդ տարիքում այդպիսի գումարներ չունեինք: Այդ պատճառով հետաձգեցինք մեր ձայնագրման պրոցեսը:

Իսկ ինչպե՞ս գումար աշխատել: Քանի որ այդ ժամանակ այլևս գիշերային աշխատանք չունեի, պետք էր ուրիշ աշխատանք գտնել, ես ու ընկերս երկար փնտրտուքների արդյունքում վերջապես աշխատանքի անցանք մոտակա գյուղերից մեկի փոքրաղաշտերում որպես բանվորներ: Աշխատանքը սկսվում էր առավոտյան և վերջանում ուշ երեկոյան: Մեր պարտականությունների մեջ էր մտնում խոտ քաղելը և բանջարեղեն հավաքելը: Օրեր կային, որ հեկտարներով հողը պետք է ջրեինք, այս ամենը ամռան կիզիչ արևի բարձր հովանու ներքո: Իսկ մեր օրական աշխատավարձը կազմում էր 2000 դրամ: Բայց, դե ինչ արած, մեզ ոչ մի տեղ չէին ընդունում, ասում էին, որ տարիքով փոքր ենք:

Մոն. -Կան, իսկ հիշո՞ւմ ես, երբ մի օր այդ դաշտային աշխատանքն էլ ավարտվեց:

Կան. -Այդ օրը մոռանալ չի լինի, նրանք մեր գումարները չէին վճարել, մեկ ամիս արդեն աշխատել էինք: Ասացին, որ գնանք, նրանք մեզ կզանգահարեն և տեղյակ կպահեն, երբ

մեր գումարը պատրաստ լինի: Մենք գնացինք, բայց դե երկուսս էլ նեղսրտած էինք, չէ՞ որ նրանք կարող էին մեզ խաբել, վերջ ի վերջո ոչ մի ապացույց չկա, որ մենք այդտեղ աշխատել ենք:

Երեկոյան հանդիպեցի ընկերոջս ու նա ասաց.

Ընկեր. -Էլ չեմ կարողանում առանց փողի, տանեցիներից էլ ամաչում եմ փող ուզել: Մի բան պիտի մտածենք:

Ես. -Ի՞նչ ես առաջարկում:

Ընկեր. -Չգիտեմ, իրոք չգիտեմ, նույնիսկ պատրաստ եմ դռները ծեծել, ասել՝ «ինչ գործ կա ձեր տանը, տվեք անեմ», միայն թե գումար աշխատեմ:

Ես. -...Ես մի միտք ունեմ,- լուռ ժպտացի, որովհետև կարծում էի այդ պահին ամենաճիշտ որոշումն այդ կլիներ:

Առավոտյան ժամը 6-ին գնացինք երկաթուղային ճանապարհով և հասանք կայարան: Այնտեղից գնացք նստեցինք, և քանի որ մեզ մոտ գումարը շատ քիչ էր, կանգ առանք մեկ այլ մարզի գյուղերից մեկում: Սկսեցինք մեկ առ մեկ բոլոր տների դռները ծեծել և աշխատանք պահանջել, բայց այդ գյուղի բոլոր բնակիչները մեզ մերժեցին: Մյուս գյուղը 5 կիլոմետր հեռավորության վրա էր, հասանք, հույս ունենալով՝ այստեղ մեզ մի գործ կտան, բայց կրկին ապարդյուն: Բոլորը ձայնները մեկ արած մեզ վռնդում էին իրենց բակերից... Այս դեպքում կարելի է ասել՝ արարքները մեկ արած: Մենք կարող էինք չարանալ, բայց ոչ, հասկանում էինք, որ եթե մենք հիմա այս ամենը չանեինք, իրենց տարիքում նույն կերպ կվարվեինք երկու անծանոթ անչափահասների հետ: Բայց մենք ընդամենը ուզում էինք գումար աշխատել... Ախ այդ փողի պակասը... Իսկ արդյո՞ք լավ կլիներ, եթե դրա պակասը չզգացվեր: Կարծում եմ՝ ոչ: Պատկերացրեք, դուք ունեք ձեր սրտի ուզածի չափ գումար,

ի՞նչ կանեք այդ գումարով: Ձեզանից մի մասն այդ գումարը կծախսի, որպեսզի գնի իր երազանքների տունը Մալիբուում, շատերը իրենց անունով նավ կպատվիրեն, ոմանք՝ բիզնես կբացեն, մարդկանց մի ստվար հատված բարեգործություն կանի և այլն: Բայց մի՞թե դրա մեջ հաճույք կա: Չէ՞ որ, երբ գնես քո երազանքների մեքենան, դու կուրախանաս մի քանի օր, որ նվեր ստացար օդից: Բայց իմ ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերեցի, որ մարդկանց մեծամասնությունը՝ 98%-ը, մեծ գումար շահելուց խառնվում է իրար, և շատ շուտ ծախսում ամբողջ գումարը, և ընդամենը 2%-ն է, որ կարողանում ճիշտ և ռացիոնալ օգտագործել՝ հետագայում իր եկամուտները ապահովելով: Ամեն դեպքում, ինձ ավելի շատ ոչ թե գրավում է նպատակակետը, այլ մինչև նպատակակետ ընկած ճանապարհը: Ամբողջ հաճույքը այն ճանապարհի մեջ է, որով անցնելով հասնում ես նպատակիդ: Եկեք մի օրինակ բերեմ իմ կյանքից, շատ եմ սիրում այս օրինակը: Իմ դպրոցի ճանապարհին մի խանութ կա, այդ խանութի պատուհանի մոտ դրված էր մի ժամանցային խաղ՝ շատերին հայտնի «SEGA»-ն, ամեն անգամ անցնելով՝ ես նայում էի ու երազում, թե երբ պիտի վերջապես ունենամ այդ խաղը: 10-րդ դասարանում իմ աշխատավարձից մի մաս հատկացրի և գնեցի: Ես ամենաերջանիկ մարդն էի այդ պահին, բայց եթե անկեղծ լինեմ, ապա կասեմ, որ այդ խաղը այդպես էլ չխաղացի, որովհետև ամենահաճելին ինձ համար մինչև այն գնելն ընկած ընթացքն էր: Ես կուրախանայի, եթե ինձ մեծ գումար տային, կամ շահեի, բայց դրանով իմ ոչ մի որակը չէր ավելանա: Նույն ազդեցությունն է թողնում, ինչպես կուլտուրիստների մոտ պրոտեինը: Այնպես որ, մենք պետք է հասնենք մեր նպատակներին, այլ ոչ թե սպասենք, թե երբ պիտի ոսկե ձկնիկներ բռնենք,

որ մեզ փող տա: Ոչ մի ոսկե ձկնիկ ինձանից լավը չի, ինքն էլ է մսից ու արյունից՝ ես էլ: Եթե մեկը հասել է հաջողության, ես էլ կարող եմ: Եթե ոչ ոք չի հասել, ես կլինեմ առաջինը: Բոլորը ցանկանում են լինել սարի գագաթին՝ չհասկանալով, որ սարը բարձրանալու մեջ է հաճույքը: Բացի այդ, այստեղ կա նաև մեկ այլ հզոր հանգամանք՝ մտքերի ուժը: Ես տարիների ընթացքում մտածելով, իմ պատկերացումներում վայելելով այդ ամենը՝ մի օր այն դարձրի իրական, ինչ-որ տեղ անկախ իմ կամքից: Իրականություն է դառնում այն, ինչի մասին մենք խոսում ենք, մտածում, երազում… Այնպես որ, զգույշ եղեք բողոքավոր մարդիկ, բարձրաձայն մի ասեք բացասական արտահայտություններ, դրանք կթողնեն իրենց ազդեցությունը: Մտածեք դրական և կդառնաք դրական… Ես ինքս չէի հասկանում այս բառերի իմաստը, բայց վերջերս հասկացա. միայն դրականը ներս թողնելով մեր կյանք՝ մենք ինքնստինքյան մեզ դրդում ենք կանխամտածված հաջողության:

Մոն. -Բայց չէ՞ որ մարդու տրամադրվածությունից է կախված իր հաջողությունը:

Կան. -Համաձայն եմ, եթե մարդ տրամադրվի, որ վատ է լինելու, անպայման վատ կլինի, և եթե լավ մտային պատկերացումներով մոտենա հարցին, ուրեմն անկասկած հաջողությունը կգտնի նրան: Մի պատմություն հիշեցի լավ ու վատ մտայինով մարդկանց մասին: Կոշիկ արտադրող մի շատ մեծ կազմակերպություն ուղարկում է իր երկու հետախույզներին (իրարից անկախ) մի ոչ զարգացած երկիր պարզելու համար՝ շահութաբեր կլինի այնտեղ կոշիկ ներմուծելը, թե՞ ոչ: Առաջին հետախույզը շտապեց զեկուցել. «Այստեղ ոչ մի շահութաբեր շուկա չի կարող լինել, քանի որ ոչ ոք կոշիկ չի հագնում, բոլորը ոտաբոբիկ են քայլում»: Երկրորդը զեկուցեց.

«Այստեղ հիանալի շուկա կարող ենք բացել, մեծ շահույթներով, պատկերացնո՞ւմ եք, ոչ ոք կոշիկ չի հագնում, բոլորը ոտաբոբիկ են»:

Ես համոզված եմ, երկրորդ հետախույզը ճանապարհ էր ընկել՝ մտածելով, որ իրեն կհաջողվի լավ նորություն հաղորդել, ինչն էլ նա արեց: Նա կարող էր վերանայել այն փաստը, որ բոլոր բնակիչները ոտաբոբիկ են, բայց ի տարբերություն առաջին հետախույզի, նա չտեսավ ոչ մի բացասական բան, որովհետև դրական էր տրամադրված: Շատ մարդիկ միշտ վատն են մտածում ու իրենց պատկերացումներում պատկերազարդում են ամենաահավոր սցենարները, որոնք կարող են լինել, բայց այդ իհարկե վատ սովորություն է, որից պետք է ազատվել:

Մոն. -Այսքանն էլ մտքի ուժի մասին:

Կան. -Դրա մասին կարելի է անվերջ խոսել, բայց սահմանափակվենք այսքանով: Ես եկա այն եզրահանգման, որ եթե մենք ունենայինք շատ փող, այդ օրը մի ծովափում մեր հանգիստը կվայելեինք, հնարավոր է իրար չէինք ճանաչի, և բացի այդ՝ այդ օրվա փորձառությունը երբեք չէինք ունենա: Իսկ այդ օրը մենք գումար չունեինք, որ տուն վերադառնայինք: Ստիպված ոտքով ճամփա ընկանք: Գիշերվա հազարին մտանք տուն, իսկ հաջորդ օրը առավոտյան զանգահարեցին և ասացին, որ մեր գումարները պատրաստ են, մենք կարող ենք գնալ և վերցնել: Դե ինչ, կարծես ամեն ինչ այդքան էլ վատ չէ:

Առանց ժամանակ կորցնելու գնացինք, գումարները ստացանք: Կարծես աշխարհը մերը լիներ: Բայց մենք գիտեինք, թե ինչ պիտի անենք այդ գումարի հետ:

Դրանից մի քանի օր առաջ ընկերոջս հետ փորձում էինք նոր երգերի երաժշտություն հնարել: Ասեմ, որ շատ բարդ էր ստացվում:

Ես. -Իսկ եթե համերգ դնենք քաղաքում մի քիչ հայտնի դառնալու ու լսարան ձեռք բերելու համար, ի՞նչ կարծիքի ես,- հարցրի ընկերոջս:

Ընկեր. -Հա, լավ բան ես ասում, բայց նախ առաջինը՝ ես ու դու ի՞նչ համերգ կազմակերպենք, եթե երգ չունենք, երկրորդ՝ մեր դրած համերգին քիչ մարդ կգա՝ մեր ընտանիքի անդամները:

Ես. -Դասական համերգ կկազմակերպենք:

Ընկեր. -Այսինքն, ես մենա՞կ պիտի լինեմ,- սկսեց ծիծաղել,- նույնիսկ դո՞ւ չես մասնակցելու:

Ես. -Մենակ չես լինի, այսօրվանից խումբ կձևավորենք: Մեզ պետք են մեկ կիթառահար և մեկ ջութակահար:

Ընկեր. -Լավ, համաձայն եմ, անցնենք գործի:

Որոշված էր: Համերգ է լինելու, բայց դեռ ոչինչ չունեինք:

Ընդամենը օրեր պահանջվեց խումբը ձևավորելու համար: Բոլորս հավաքվեցինք ընկերոջս տանը, ես հպարտությամբ հայտարարեցի.

Ես. -Տղեք, ուրեմն ունենք 3 ամիս ժամանակ: Պետք է շատ պարապեք, այս համերգից շատ բան է կախված: Ընտրված է 12 ստեղծագործություն: Յաննիի ստեղծագործություններն են մեծամասնությունը, Արամ Խաչատրյան և Ջիպսի Քինգս: Քանի որ խմբի ռեփերը ես եմ, ու այս համերգի ժամանակ ռեփ չի լինելու՝ ես գնում եմ հանգստանալու, իսկ դուք ամբողջ ամառ պետք է պարապեք, վերջին ամսում ես կզբաղվեմ դահլիճի և տոմսերի հարցերով: Հարցեր կա՞ն:

Ընկեր. -Կան,- իրեն հատուկ ժպիտով ասաց ընկերս և ձեռքը բարձրացրեց:

Ես. -Ասա:

Ընկեր. -Պարոն մայոր, կարելի՞ է գնալ զուգարան,- ծիծաղում է:

Ես. -Գնա, ու անցեք գործի, քիչ ժամանակ ունենք:

Անցան ամիսներ, օգոստոսի վերջերն էր՝ վերադարձա… Լիարժեք հանգիստ, շատ եմ սիրում հեռավոր գյուղական հանգիստը: Բայց չեմ սիրում, որ այդ գյուղերում չկա խանութ, որտեղ, ասենք, կարող ես սափրվելու պարագաներ առնել: Երևի հասկացաք, որ 2 ամսվա մորուքով էի և քանի որ ինչպես ցանկացած հայ տղա սկսել էի 10 տարեկանից սափրվել՝ մեծ ձածայից ոչնչով չէի տարբերվում: Այդ օրը խումբն արդեն սկսել էր պարապմունքը, ես էլ միացա բոլորին, ընկերոջս հետ սկսեցինք քննարկել բոլոր դետալները և այդտեղ հասկացանք, որ ամենակարևորներից մեկը բաց ենք թողել.

Ընկեր. -Հաղորդավարուհի… Ո՞նց էինք մոռացել…

Ես. -Այ ախպեր, հաղորդավարը դիմացներդ նստած՝ հաղորդավարուհի՞ եք ման գալիս,- բայց իրականում, իրոք ես էի ուզում վարել:

Ընկեր. -Դու չես կարող համ վարել, համ էլ այդքան բաների միանգամից հետևել:

Ես. -Լավ… չհամոզեցիր, բայց ոնց ուզում եք, այդպես էլ արեք,- մի քիչ մտածեցի ու ասացի,- եթե ես չլինեմ, բա էլ ո՞վ:

Ընկեր. -Դե… չգիտեմ:

Ես. -Փաստորեն, չունենք հաղորդավարուհի,-ժպտալով ասացի ես, հույս ունենալով, որ ուր որա է ինձ կառաջարկեն:

Ընկեր. -Մի աղջիկ կա, բայց չգիտեմ՝ կհամաձայնվի, թե չէ…

Ես. -Եթե աղջիկ ա, ուրեմն կհամաձայնվի, դու համարն ասա:

Ընկեր. -Քրոջս վոկալի ուսուցչուհին ա: Ասեմ՝ 09…

Համարը հավաքեցի ու զանգը գնաց… և ամեն ինչ սկսվեց այդ վերջին գուդոկից հետո…

Մի հաճելի ձայն պատասխանեց:

Նա. -Ալո՞:

Ձայնի նկատմամբ իմ թուլությունը ստիպեց ինձ, որ խառնվեմ իրար, քիչ էր մնում ասեի. «Որ խնդրեմ, մեկ անգամ էլ կասե՞ք ալո», բայց առանց իմ խնդրելու երկրորդ անգամ էլ ասաց. «Ալո՞»: Ինչ հրաշալի ձայն, կարելի է ասել՝ սեր առաջին հնչյունից: Բայց ես ուղղակի հաճույք էի ստանում: Հեռախոսը անջատեց… Դե բնականաբար, եթե ձեզ էլ զանգեն ու չխոսեն, դուք էլ կանջատեք: Երկրորդ անգամ զանգեցի և միանգամից փորձեցի տակից դուրս գալ…

Նա. -Ալո՞:

Ես. -Ալո, բարև ձեզ, հիմա լսո՞ւմ է:

Նա. -Այո, այ հիմա լսում եմ:

Ես. -Դե լավ է, թե չէ խոսում էի, չէիք լսում,-ասածս ստից աչքերս կլորացան:

Նա. -Պարզ է… կներկայանա՞ք:

Ես. -Ճիշտն ասած, իմ անունը ձեզ ոչինչ չի ասի, դուք ինձ չեք ճանաչում,- ի՞նչ էր կատարվում, ի՞նչ անհասկանալի տեքստեր էի ասում՝ ես էլ չէի հասկանում:

Նա. -Իսկ ո՞վ է ձեզ իմ համարը տվել,- մի քիչ վրդովված արձագանքեց իմ անհասկանալի պատասխանին, որից հետո հասկացա, ավելի ճիշտ հիշեցի, թե ինչի համար եմ զանգահարել այս հեռախոսահամարով:

Ես. -Ձեր համարը ինձ տվել է ձեր աշակերտուհիներից մեկի եղբայրը, մենք համերգ ենք կազմակերպում և ձեզ առաջարկում ենք վարել այն: Դուք համաձա՞յն եք:

Նա. -Այո:

Ես. -Այո՞,- չգիտեմ ինչու հարցրի, երևի զարմացա, որ առանց մտածելու համաձայնվեց:

Նա. -Իհարկե, ե՞րբ հանդիպենք, որ մանրամասները քննարկենք:

Ես. -Վաղը այս ժամին ձեր աշակերտուհու տանը:

Նա. -Շատ բարի, հաջողություն:

Ես. -Հաջող...ություն...

Դե ինձ հատուկ ձևով սկսեցի գլուխս գովալ, ասելով՝ որ ինձ համար անհնար ոչինչ չկա, որովհետև ես իդեալական եմ:

Կհավատա՞ք, ես թուլություն ունեմ մարդու գեղեցիկ ձայնի նկատմամբ, և շատ էի հավանել նրա ձայնը... Նրա ձայնը...

Բայց օրական այնքան ձայներ եմ լսում, որ շատ լավն են, որ սովորականի պես շուտ էլ մոռացա...

Մոն. -Շուտ մոռացա՞ր:

Կան. -Ինչ հետաքրքիր է, անգամ գիրք գրելուց փորձում եմ ինքս ինձ խաբել, ծիծաղելի է:

Մոն. -Ես էլ զարմացա:

Կան. -Արի չխոսանանք, այդ ժամանակ, այո, ես մեղմ ասած կախարդված էի, բայց հիմա ամեն ինչ անցյալում է, ուղղակի ես չգիտեի, որ գիրք գրելով իրոք ետ ես գնում այդ ժամանակները, տեսնում ամեն մանրուք: Մի քիչ ցավոտ է:

Մոն. -Լավ, ես էլ զգացի: Շարունակիր պատմությունը:

Կան. -Հաջորդ օրը առավոտյան զանգ եկավ, ընկերս էր, ասաց, որ բոլորն արդեն եկել են: Շտապ վեր կացա ու կայծակնային արագությամբ գնացի ընկերոջս տուն: Նույնիսկ չսափրվեցի: Մտնելով ներս՝ տեսա Նրան: Նա նստած էր և լսում էր, թե ինչպես են տղաները երգի փորձ կատարում:

Ես. -Բարև ձեզ, ես Նորոն եմ, երեկ ես էի զանգել:

Նա. -Ողջույն, իսկ ես... (անունը չեմ ցանկանում նշել):

Ես. -Շատ հաճելի է:

Ընկերոջս քույրը, ով նաև Նրա աշակերտուհին էր, ցանկանալով իմ այսպես ասած լավ կողմերը ներկայացնել, ասաց.

Քույրիկ. -Նորոն նաև երգեր է գրում և ռեփով զբաղվում:

Նա. -Ռեփե՞ր,- Նա մեղմ ժպտաց և նայեց աչքերիս մեջ:

Ես այդ պահին մտածեցի, որ նրա դուրն եկավ այդ փաստը, բայց մի քանի ամիս անց նա պիտի խոստովաներ, որ այդ պահին մտածել էր. «Սրանից ի՞նչ ռեփեր»: Ինչ որ տեղ համաձայն եմ, մի տեսակ հայկական ռեփ... չի լինում այդպիսի բան, հայերեն ստեղծագործելը շատ դժվար է, ի տարբերություն ռուսերենի, անգլերենի և այլ լեզուների, որոնց բառերի վերջավորությունները մեծ մասամբ համընկնում են: Հայերենում բարդ է հնչող բառեր գտնել, իրար կապել և ամենակարևորը իմաստ արտահայտել, այնպես որ կարող եք քննադատել ինչ որ աշխատանք այն դեպքում, եթե դուք ավելի լավ եք կարողանում անել:

Ես. -Արի սցենարը գրենք, լա՞վ,- ցանկանալով լռությունը կոտրել՝ ասացի ես,- ուրեմն համերգը սկսում ենք Յաննիի ստեղծագործություններից «Նոստալգիա»-ով, անմիջապես հետո դուրս ես գալիս բեմ և ներկայանում...

Այսպես մի քանի ժամ տևեց մինչև սցենար գրելու պրոցեսը հասցրինք տրամաբանական ավարտի:

Նա. -Ես տանը էլի կնայեմ: Կարո՞ղ եմ ինչ-որ նոր բաներ ավելացնել,- հարցրեց ինձ:

Ես. -Խնդիր չկա, մենք քեզ վստահում ենք:

Նա գնաց, տղաները փորձն էին շարունակում, իսկ ես դուրս եկա, որ հրավիրատոմսերը պատվիրեմ: Ամեն ինչ գեղեցիկ էր ստացվել, մի քանի օրից մեր համերգն էր, բոլորս սպիտակ էինք հագել, Նա նույնպես: Այդ օրը մեզ միացավ ևս մի անձնավորություն, ով ցանկություն հայտնեց մեր համերգին մասնակցելու որպես թմբկահար:

Դե ինչ, ավելի լավ չէր կարող լինել այդ ժամանակ, 16 տարեկան էինք բոլորս, և լրիվ մեր ուժերով առաջին համերգը

կազմակերպեցինք երաժշտական դպրոցներից մեկի դահլիճում:

Մարդիկ եկան, նրանց քանակը ավելին էր, քան մենք էինք պատկերացնում: Ամբողջ դահլիճը գրեթե լցվել էր: Ես հյուրերին էի դիմավորում և ուղեկցում դեպի իրենց նստատեղերը: Երբ բոլորը նստեցին՝ լույսերը մարեցին, վարագույրը բացվեց… և համերգը սկսված էր: Ամեն ինչ լավ էր ընթանում: Նա ընդամենը երկու վրիպում թույլ տվեց իր տեքստի մեջ, նախ առաջին՝ ընկերոջս ազգանունը, և երկրորդ՝ հանրահայտ «Սիցիլիա» ստեղծագործությունը ներկայացրեց այսպես. «Իսկ այժմ դիմավորեք, մի հրաշք ստեղծագործություն, ԻՍՊԱՆԱԿԱՆ կոզիներից մեկը՝ Սիցիլիա»: Եթե ճիշտն ասեմ, ոչ բոլորը գիտեին, որ այն իտալական էր: Շարունակաբար ընկերոջս ազգանունը սխալ ներկայացնելու պատճառով ես գնացի ետնաբեմ և իմ չորան ձևով ասացի, որ սխալ է ներկայացնում, շուտ ազգանունը ուղղի: Բնականաբար իմ ասելու ձևից Նա իրեն շատ վատ զգաց, ինչը նկատեցի համերգից հետո Նրա արցունքներից: Կնոջ ամենաուժեղ զենքը նրա արցունքներն են: Ես չհասկացա, թե ինչպես նրան գրկեցի և ներողություն խնդրեցի, իրոք շատ վատ պահեցի ինձ: Նա ժպտաց, ամեն ինչ անցավ: Բոլորս երջանիկ էինք: Չէ՞ որ մեր նպատակներից մեկը իրականություն դարձավ:

Նրան երկար ժամանակ չտեսա…

Հոկտեմբերի վերջերն էր… Աշխարհահռչակ բռնցքամարտիկներից մեկը եկել էր մեր քաղաք իր միջոցներով կառուցված եկեղեցու բացման արարողությանը մասնակցելու համար: Ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ և պաշտոնյաներ: Քանի որ իմ բարեկամն էլ էր բարձրաստիճան պաշտոնյա, հետևաբար ես նրանց հետ էի կանգնել՝ հենց նրա պնդմամբ:

Երբ արարողությունը սկսվեց, եկեղեցական երգչախումբը սկսեց երգել, և այդ ձայների մեջ առանձնացավ մի յուրահատուկ ձայն, որը մի տարօրինակ կերպով հարազատ էր ինձ: Նա էր…

Քիչ անց տեսա Նրա մայրիկին, անկեղծ եմ ասում, ես շատ եմ հարգում այդ կնոջը, իրոք, ես շատ կցանկանայի, որ իմ ապագա կնոջ մայրը գոնե կիսով չափ նրա նման լիներ: Մայրը բողոքեց, որ իր աղջիկն ինքն իրեն լավ չի նայում, գերհոգնած է և շարունակում է իրեն տանջել, հաց չուտել: Այս ամենը լսելով, շատ ջղայնացա: Երբ Նա մոտեցավ, անմիջապես պահանջեցի հեռախոսահամարը և ասացի, որ պարբերաբար զանգահարելու եմ և ստուգեմ, թե ոնց է ինքը իրեն զգում, և Աստված չանի, եթե շարունակի նույն տեմպով:

Անցան ամիսներ, մենք ամեն օր շփվում էինք, ես գիտեի ու համոզված էի, որ գտել եմ իմ երազանքների իդեալին:

Մոն. -Մոռանում ես, մոռանում ես…

Կան. -Իդեալ բառի համա՞ր ես ասում:

Մոն. -Այո, նա շատ թերություններ ուներ:

Կան. -Մոն, ես ասացի՝ իմ երազանքների իդեալին, այդ չի նշանակում, որ նա պիտի իդեալական լինի: Մենք մարդ ենք, և բոլորս էլ ունենք թերություններ: Իմ թերությունների մասին մի ամբողջ գիրք կարելի է գրել: Բայց այս գիրքը թերությունների մասին չի:

Մենք խոսում էինք, զրուցում տարբեր թեմաներից, ես արդեն զգում էի, որ առանց Նրա իմ օրը չեմ պատկերացնում: Կհավատա՞ք, մի քանի ամիս շփումից հետո միայն ցանկացա իմանալ, թե քանի տարեկան է: Ես վախենում էի այդ հարցից, որովհետև իմ տեսքը տարիքիս չէր համապատասխանում: Նա մտածում էր, որ իր տարիքին կլինեմ, իսկ ես հասկանում էի, որ Նա տարիքով մեծ է ինձանից, բայց չգիտեի՝ թե ինչքան:

Նա. -Սկզբից դու ասա:

Ես. -Ես 16 եմ:

Նա. -...Ո՞նց թե 16: Կատակո՞ւմ ես:

Ես. -Ոչ, ամենայն լրջությամբ եմ ասում,- Նրա հարցից արդեն վախեցել էի, Նրա ժպիտը միանգամից կորավ:

Ես. -Քանի՞ տարեկան ես,- արդեն անհանգստությամբ հարցրի նրան:

Նա. -24:

Երկուսով լռեցինք, ես մտածում էի, թե ինչի համար Նրան այդ հարցը տվեցի, մի՞թե լավ չէր լինի ապրեինք մեր երազներով ու չիմանայինք... Բայց ոչ, երբեմն պետք է կանգ առնել, ու նայել ճշմարտության աչքերի մեջ: Բայց ճշմարտությունը այդ ժամանակ քնած էր... Նրա աչքերը փակ էին... տարիքային տարբերություն, մի դժվարություն: Բայց այդ մեկ դժվարությունն է, որ պիտի ծներ բազում դժվարություններ: Մենք չէինք ասել միմյանց այն 3 բառերը, որոնք զույգերը չեն խնայում օրական մի քանի անգամ շռայլել իրենց սիրելիներին՝ «Ես սիրում եմ քեզ»: Երբեք պետք չի հասարակացնել այդ բառերը, չէ՞ որ բառերն են ծնում գործողություններ, հետևաբար, եթե հասարակացնենք այս 3 բառերը, հարաբերություններն էլ կհասարականան:

Մենք աչք փակեցինք այդ տարբերության վրա՝ ինչ-որ տեղ գաղտնի պահելով մեր զգացմունքները: Մեր մտերիմ ընկերները վատ ընդունեցին այդ փաստը, ուր մնաց ընտանիքի անդամներին այդ լուրը հայտնեինք: Շարունակում էինք՝ հասկանալով, որ մի օր այսպես թե այնպես պետք է այդ թեման քննարկենք, իսկ թե քննարկման արդյունքում ինչ կլիներ... չէի էլ ուզում մտածել:

Սպասեք, ես մի նպատակ ունեի, որը պետք է իրականաց-

նեի՝ երգ ձայնագրել: Քանի որ Նա երգչուհի էր և սովորում էր երգի առաջատար համալսարանում, հարցրի, թե հնարավո՞ր է, որ ինչ- որ ծանոթ ունենա, ով զբաղվում է ձայնագրություններով:

Նա. -Այո, ճանաչում եմ, ուղղակի սոցիալական ցանցում ընկերներիս ցուցակի մեջ կա, բայց հեռախոսահամարը չունեմ: Ձայնագրություններով զբաղվելուց բացի շատ տաղանդավոր երգիչ է:

Ես. -Լավ, դու ասա անուն ազգանունը, ես կգրեմ:

Իմ հեռախոսով, որն այն ժամանակ փոքր էկրան ուներ, գտա այդ երգչին և գրեցի. «Բարև, քո բջջայինի համարը մի հատ կտա՞ս զանգահարեմ»: Պատասխանը չուշացավ, որը համարի տեսքով էր: Զանգահարեցի.

Ես. -Բարև, ես ուզում եմ մի երգ ձայնագրել, վաղը ժամը քանիսի՞ն կարող ենք հանդիպել:

Երգիչ. -Նոր ջան, վաղը ժամը չորսին արի համալսարան:

Ես. -Լավ, դե պայմանավորվեցինք:

Ուզում եմ մոտավոր ներկայացնել, թե ինչպիսին էի ես այդ ժամանակ: Շորերս նկարագրեմ, երևի մնացածը պարզ կլինի: Ես հագել էի սև սպորտային շորեր (սպարտիվկա) և ծիծակ կոշիկներ: Եկեք այս ասածներս շատ շուտ մոռանանք ու անցնենք առաջ: Հանդիպման պիտի գնայի ընկերոջս հետ: Մենք որոշ պատճառներով մեր աշխատանքները ուշ վերջացրինք և շտապեցինք հանդիպման:

Ընկեր. -Ուշանալու ենք:

Ես. -Չենք ուշանա, դեռ ժամանակ կա, կհասնենք:

Ընկեր. -Հաստատ ուշանալու ենք, դու վատագույն տարբերակները հաշվի չես առնում երբեք, բա որ կարմիր լույսեր լինեն, բա որ խցանումների մեջ ընկնենք, մտածե՞լ ես:

Ես. -Հանգստացի, լավ կլինի:

Ընկեր. -Չէ, չեմ սիրում քո բնավորությունը, մի քիչ ուշ ժամի համար պայմանավորվեիր: Չեմ սիրում ուշանալ:

Ես. -Ես էլ չեմ սիրում, ու չենք ուշանա:

Քանի որ ընկերս արդեն մտքի ուժով դեպի իրեն ձգել էր ուշանալը… չեք հավատա, բայց բոլոր կարմիր լույսերի տակ կանգնեցինք, և վերջում ընկանք խցանման մեջ: Ստիպված ոտքով գնացինք, մոտ 3 կիլոմետր, որի մեծ հատվածը վազեցինք: Վերջապես, 30 րոպե ուշացումով հասանք հանդիպման վայր:

Ընկեր. -Մի հատ զանգի տես, կարողա եկել- գնացելա:

Հեռախոսս վերցրի ու տեսա, որ անջատված է, ու մարտկոցը նստած է:

Ես. -Զարյադկա չունեմ, դու զանգի:

Պարզվեց, որ ընկերս հեռախոսը թողել է տանը: Ծնորհավորում եմ, մենք կատարյալ անորոշության մեջ ենք:

Ընկեր. -Ես գիտեի, որ սենց մի բանա լինելու, ասում էի, չէ՞:

Ես. -Ասում էիր, դրա համար էլ եղավ:

Մինչև մենք վիճում ու մեղավորին էինք փնտրում, մեզ մոտեցավ ընկերուհիս.

Նա. -Դեռ չհանդիպեցի՞ք:

Ես. -Լսի պատմեմ ինչ եղավ,- ու երկար-բարակ պատմեցի մեր անհաջողության մասին:

Նա. -Լավ, սպասիր ես զանգեմ… Ալո, որտե՞ղ ես, լավ, դե քեզ ենք սպասում:

Ընկեր. -Ի՞նչ ասեց:

Նա. -Ասաց, որ շուտով կհասնի և ներեղություն է խնդրում ուշանալու համար,- պատասխանեց Նա:

Ես. -Փաստորեն, ամեն ինչ այնքան էլ վատ չի, որքան մենք ենք պատկերացնում:

Նա. -Ամեն ինչ շատ լավ է, ես մտնեմ լսարան, թղթեր պիտի վերցնեմ, երկու րոպեից կգամ:

Նա գնաց, ես ու ընկերս մնացինք շատ թեթև ժպիտները դեմքերիս, լավ է, որ չուշացանք: Լինել պունկտուալ մեր պրինցիպներից մեկն է:

Ընկեր. -Նայի, հենա՝ եկավ:

Ես. -Ո՞ւրա:

Ընկեր. -Աստիճանների վրա այս ու այն կողմ ա նայում:

Ես. -Աստիճանների վրա մի հոգի կա, այն էլ երկար մազերով:

Ընկեր. -Հա բա, երկար մազերովա:

Ես. -Չի կարա տենց բան լինի: Ես նկարը տեսել եմ, կարճ էր մազերը, ու գրազ կգամ, որ ինքը չի:

Ընկեր. -Արի մի հատ սեղանի վրա գրազ գանք:

Ես. -Արի:

Ձեռք ձեռքի տվինք, կիսեցինք ու հանկարծ…

Երգիչ. -Նորո՞..,- կանչեց ինձ աստիճանների վրա կանգնած երկար մազերով տղան, ով այն երգիչն էր, ում սպասում էինք:

Պարզ է, ես միանգամից քայլեցի հակառակ ուղղությամբ, նա մոտեցավ ընկերոջս, նրանք սկսեցին զրուցել, իսկ ես տուն էի գնում: Երբ իմ սիրելին դուրս եկավ և տեսավ, որ ես գնում եմ, վազելով հասավ ինձ.

Նա. -Նոր, կանգնի:

Ես. -Լսի… դու… ես… ինձ լավ չես ճանաչո՞ւմ: Ես ո՞նց կարամ գործ բռնեմ երկար մազերով ոմն անձնավորության հետ:

Նա. -Հոգնել եմ քո քյառթու բնավորությունից, հերիք եղավ, ինձ խայտառակ չանես իր մոտ, քո մասին պատմել եմ, հիմա դուրս կգա, որ ստել եմ: Եթե ինձ մի քիչ հարգում ես, արի… Թեկուզ վերջում մի համաձայնվի, բայց արի:

Ես. -Լավ… Մենակ քեզ համար:

Մոտեցանք: Նրանք արդեն երկար զրուցել էին:

Ընկեր. -Լավ, մի ձայնագրության համար ի՞նչ գին կասես:

Երգիչ. -Դուք ժամավարձո՞վ եք ուզում, թե՞ ընդհանուր գործի համար միանգամից գին ասեմ:

Ընկեր. -Մեր առաջին գործն ա, երևի ընդհանուր գործի գինն ասես, այդպես ավելի ճիշտ կլինի:

Երգիչ. -Լավ, 30.000:

Ես թշնամաբար հայացքով նայեցի նրան, ու մտածեցի. «Քեզ էտքան տվող չկա, քո արած գործը ի՞նչ պիտի լինի», բայց նրա հայացքն իմ հայացքից չէր տարբերվում, նա էլ մտածում էր. «Հա լավ, էս ո՞վա էս քենքը»:

Ընկեր. -Նոր ջան, մի բան էլ դու ասա,- վերջնական խոսքի համար խոսքը փախանցեց ինձ:

Ես. -Ապե…ր,- մի քիչ վիրավորական դիմեցի նրան:

Երգիչ. -Ի՞նչ:

Ես. -Մազերդ խիա՞ երկար:

Բոլորի աչքերը կլորացան, իսկ իմ սիրելիի ծանոթ երգիչը առանց իրար խառնվելու միանգամից պատասխանեց.

Երգիչ. -Կինոյի մեջ պիտի խաղամ:

Այդ ժամանակ շատ պոպուլյար էին հանցագործ աշխարհի մասին պատմող ֆիլմերն ու հեռուստասերիալները, և այդ ֆիլմերի դերասանների մազերը երկար էին: Միանգամից այդքանը անալիզ արեցի մտքումս ու ինքս ինձ ասացի. «Բայց լավ բանի համար ա մազերը երկարացնում, հալալա»:

Ես. -Լավ, ախպերս, ե՞րբ սկսենք ձայնագրվելը:

Երգիչ. -Երկուշաբթի եկեք, սկսենք:

Ես. -Եղավ, ուրեմն պայմանավորվեցինք:

Նա. -Ի դեպ, շնորհավորում եմ Առնո Բաբաջանյանի ան-

վան մրցույթում հաղթելու համար, քեզ նորանոր հաջողություններ եմ ցանկանում,-մաղթեց ընկերուհիս:

Երգիչ. -Շատ շնորհակալ եմ:

«Չէ, փաստորեն երաժշտությունից հասկանումա»,-մտածեցի ես: Այնուհետև իրար հաջողություն մաղթելով գնացինք տուն:

Այս երգչի հետ շատ երկար աշխատեցինք, 5 երգ ձայնագրելուց հետո բնականաբար իրար ճանաչեցինք, և այժմ նա իմ լավագույն ընկերներից մեկն է:

Նոր տարի... Տոնական տրամադրություն, մարդկանց մի մասը՝ ավելի ճիշտ, երիտասարդները, մտածում են, թե գիշերը քանի՞ տուն կարող են հյուր գնալ, ի՞նչ խենթություններ կարող են անել այդ գիշեր, իսկ մյուս մասը՝ավելի ճիշտ, մեծահասակները, մտածում են Նոր տարվա պարտքերի տակից ո՞նց են դուրս գալու: Չնայած այս ամենին, Նոր տարվա մասսայական բնույթ կրող հյուրընկալությունները ճիշտ եմ համարում, որովհետև այն կարող ենք նաև համարել բարեկամաճանաչության օրեր. կան մարդիկ, որոնց միայն այդ տոներին ես տեսնում: Նորմալ է, բոլորս էլ ունենք գործեր և ֆիզիկապես անհնար է բոլորին ժամանակ տրամադրել:

Ես ընկերոջս հետ որոշել եմ, որ այդ գիշեր կգնանք իրենց տուն, հետո մեր և վերջում մեր մյուս ընդհանուր ընկերների: Դեկտեմբերի 31-ի առավոտյան իմ սիրելին ինձ մի ձայնասկավառակ տվեց, որի մեջ իր միակ ձայնագրված երգն էր... Երգը պատմում էր մի աղջկա մասին, և նկարագրում նրա պատկերացումները, թե ինչպես իր սիրելին կասեր, որ իրեն սիրում է...

Նոր տարի է, Նոր տարի, երազանքներ թող կատարվի: Խփեցին զանգերը, շամպայնը պայթեց, բոլորի դեմքին ուրա-

խություն, ժպիտ, ծանոթ-անծանոթ իրար շնորհավորում, բարևելուց պաչում, իրար թև մտած քայլում, մեկի ոտքը սայ-թաքում է, բոլորն են ընկնում, բաց պատշգամբով բնակարան են փնտրում, որ բոմբ գցեն: Մի խոսքով, ում մտքով ինչ անցնի, այդ օրը պիտի անի, որովհետև բոլորի տրամադրությունը տարբեր պատճառներով բարձր է... բացի իմ տրամադրություն-ից… այս տարի յուրահատուկ տարի է, «չգիտեմ»-ի տարի, երբ ամեն ինչ անհասկանալի է, բանակը մեջտեղ է գալիս ու քանդում բոլոր ծրագրերս իմ ապահով ու երջանիկ ապագայի վերաբերյալ: Չնայած առաջ տխրությունը հաճելի երևույթ էր: Սիրում էի երաժշտություն միացնել, լսել ու տխրել: Մենք մեզ դժբախտ ենք համարում և կարծում ենք, որ մեր փոխարեն մեկ ուրիշը լիներ, անպայման կխելագարվեր, մեր դժբախտության մասին շատ պատմություններ կարող ենք պատմել, բայց պետք է գիտակցել, որ տխրելով հարցին լուծում չես տա, նույ-նիսկ մեկ վայրկյան չարժի տխրել, ես ինձ հարցնում եմ. «Դու երջանի՞կ ես», և ինքս ինձ գոռալով պատասխանում՝ «ԱՅՈՈ-ՈՈՈ»: Եթե ուզում ես միշտ երջանիկ լինել, պիտի միշտ գիժ լի-նես, աննորմալ… Նորմալ մարդիկ շատ են, եթե նմանվես նրանց, կսկսես նրանց նման բողոքել: Առաջ վախենում էի տարբերվելուց, բայց հիմա՝ ոչ: Վերջ: Ես աննորմալ եմ: Ես եր-ջանիկ եմ: Չնայած որ ամեն ինչ անորոշ է… Անցյալը այլևս չկա, ապագան դեռ չի եկել, նշանակում է՝ պետք է ապրեմ ներ-կայով:

Հաջորդ օրը որոշեցի, որ ընկերոջս հետ գնանք իմ սիրելիի տուն Նոր տարի շնորհավորելու: Մեզ միացավ նաև մեր ընկե-րուհիներից մեկը: Այդ օրը մնաց իմ հուշերում… Իմ սիրելիի մայրը այնպես մի բան արեց, որը կյանքում չեմ մոռանա: Ոչ, չմտածեք, որ վատ վերաբերվեց, ընդհակառակը, շատ լավ էր

ամեն ինչ, մինչև որ գնաց և Ձմեռ պապիկի շորեր հագած վերադարձավ:

-Եկեք, իմ բալիկներ, եկեք կանգնեք այստեղ,-բոլորս այդ ընթացքում մեկ գծով շարվեցինք հյուրասենյակում:- Ես Ձմեռ պապիկն եմ, ես կկատարեմ ձեր ցանկություններից միայն մեկը, լավ մտածեք, թե ինչ եք ցանկանում, կրկնում եմ, ցանկություններից միայն մեկը և այն անպայման կկատարվի... դու, ի՞նչ ես ցանկանում:

-Ե՞ս,- ժպտալով հարցրեց մեր ընկերուհին,- ես կցանկանամ, որ բոլորը գտնեն իրենց կյանքի կեսին և երջանիկ լինեն:

-Այդպես էլ կլինի, իմ աղջիկ: Դո՞ւ ինչ ես ցանկանում:

Նա. -Ես չգիտեմ՝ ինչ ցանկանամ... Կարծես, ամեն ինչ ունեմ: Ուզում եմ ունեցածս պահպանվի:

-Իսկ դո՞ւ:

Ընկեր. -Շատ փող, առողջություն:

-Թող լինի քո ուզածով: Իսկ քո միակ ցանկությունը ո՞րն է,- նայելով ինձ և մեղմ ժպտալով հարցրեց:

Ես հասկացա, թե այդ ամենը ինչի համար էր կազմակերպված. իմ սիրելիի մայրը ուղղակի ուզում էր համոզված լինել, որ ես իրոք սիրում եմ իր աղջկան, այդքան համարձակություն կունենա՞մ ասեմ. «Ես ուզում եմ ձեր աղջկա հետ ամուսնանալ», բայց ոչ, չհամարձակվեցի, չհերիքեց ինքնավստահությունս: Աչքերս իջեցրի ու մեղավոր ձայնով երկու բառ ասացի.

Ես. -Լինենք երջանիկ:

Ես ինձ մեղավոր զգացի, որովհետև միշտ այդքան համարձակ էի, հիմա ինչո՞ւ պիտի համարձակությունս երես թեքեր ինձանից: Հետո մի նախադասությունով ինչքան հարցեր կլուծեի, բայց՝ ոչ, ամեն ինչ թողեցի նույն դիրքում՝ «Լինենք երջանիկ»: Եվ այս հիշողությունով էլ ավարտվեց իմ Նոր տարին:

Այն ավարտվեց իմ սխալ պատասխանի հետևանքով… Անցան ամիսներ…

Ինչպես բոլոր երիտասարդները, այդպես էլ ես սովորում էի, որպեսզի ընդունվեմ բարձրագույն ուսումնական հաստատություն, եթե ժամանակը ետ տայի, չէի սովորի, որովհետև այդ տարիքում մեզ բոլորիս մի շատ հետաքրքիր հեքիաթ էին պատմում՝ «Լինում է չի լինում, մի պետություն է լինում, որում դիպլոմը պետքական է լինում», բայց միայն օժիտի մեջ դնելու համար: Քանի որ այս ամենի մասին տարիներ անց պիտի իմանայի, հետևաբար քրտնաջան սովորում էի, առանց ինձ խնայելու: Առավոտ գնում էինք մեր դասախոսի մոտ, գիշերը վերջացնում էինք, այդ ընթացքը տևեց մեկ շաբաթ: Ես բնականաբար չկարողացա զանգահարել Նրան, միայն բջջային նամակներով էի շփվում, այն էլ դժվարությամբ: Աղջիկները մի հետաքրքիր բնավորություն ունեն՝ չհասկանալ դիմացինին: Ես հանձնեցի քննություններս, շնորհավորում եմ, ես համալսարանին պարտք եմ միլիոնավոր գումարներ: Փոխարենը դիպլոմ եմ ստանալու, այնպես չէ՞: Օ, ինչ երջանկություն… բայց մեկ րոպե… Նա… Նա ինձ է սպասում, վերցրի հեռախոսը, զանգեցի, բայց չվերցրեց: Պարզ է, Նա նեղացել է…

Հասկանում եմ Նրան և չեմ մեղադրում, իրոք, ես մեղավոր եմ, բայց ավելի շատ խելագարվում էի, որ չի թողնում բացատրեմ, չէ՞ որ այս ընթացքը շատ նորմալ երևույթ էր: Բայց մի պատմություն կա, որը հիմա կպատմեմ:

Գիտնականները փորձ են կատարում. նրանք վերցնում են նույն ծաղկի երեք սերմ և դնում տարբեր ծաղկամաններում. Փորձը հետևյալն է. առաջին ծաղկամանին ամեն օր ջրելուց պետք է ասեին «Ես քեզ սիրում եմ», երկրորդ ծաղկամանին՝ «Ես ատում եմ քեզ», իսկ երրորդ ծաղկամանին ոչինչ չասեին:

Անցնում է ժամանակ...

Առաջին ծաղկամանի սերմը, որին ասել էին «Ես քեզ սիրում եմ», մի գեղեցիկ ծաղիկ է դառնում:

Երկրորդ ծաղկամանի սերմը, որին օրեր շարունակ ասել էին «Ես ատում եմ քեզ», քերի է ծաղկում՝ շատ խեղճ ու թոշնած տերևներով...

Իսկ երրորդ ծաղկամանի սերմը, որին ոչինչ չէին ասել, նույնիսկ չի ծլում, այն հողից հանելուց տեսնում են, որ փտել է...

Չկա ավելի վատ բան, քան անտարբերությունը...

Իսկ իմ պահվածքը կարելի էր որակավորել որպես «անտարբերություն»: Այդ նույնն է, որ առողջ խնձորի մեջ որդ մտնի. ինչքան երկար մնա, այնքան շատ կփչացնի:

Որոշեցի գնալ նրա աշխատանքային սենյակ: Նա այնտեղ էր…

Ես. -Ինչո՞ւ չես պատասխանում զանգերիս:

Նա. -Իսկ դու ինչո՞ւ իմ զանգերին չէիր պատասխանում,- հուզված արտաբերեց և փայլող, մի փոքր լցված աչքերով, բայց հպարտ ու պարզ ճակատով նայեց աչքերիս մեջ:

Ես ժպտացի.

Ես. -Կներես: Ես ընդունվեցի համալսարան: Հիմա արդեն ազատ եմ:

Նա. -Նոր, դու ինձ մենակ ազատ ժամանա՞կ ես հիշում:

Ես. -Ստոպ: Հասկանում եմ, նեղված ես, բայց հիմա պետք չի կռվել, ես գիտեմ ես եմ մեղավոր, դրա համար ներեղություն խնդրեցի, դու ասա՝ ներում ես մնա՞մ, թե՞ չես ներում՝ գնամ…

Նա. -Ոչ:

Ես. -Այսի՞նքն, չե՞ս ներում:

Նա. -Ոչ, ես ներելու ոչինչ չունեմ, դու ինձ կներես: Իմ անիմաստ էգոիստության պատճառով քիչ էր մնում քեզ կորցնեի:

Նրան հենց սրա համար էլ շատ էի սիրում, մեղավոր լիներ, թե ոչ, հասկանում էր, որ իր դիմացինը տղամարդ է, և երբեք իրեն բարձր չդասեց ինձանից, իմ խոնարհվելու ժամանակ ինքը խոնարհվեց:

Նա. -Ես մի երազ տեսա այսօր,- շարունակեց նա,- տնից դուրս եկա, գնում էի դասի… դու եկար մեքենայով, բայց դրսից չէր երևում մեքենայի ներսում ով կար, ես գիտեի, որ դու ես, մաքրում էի ապակին, բայց սառույցը պատել էր այն:

Ես. -Ճիշտն ասած երազները չեմ կարողանում մեկնաբանել: Բայց միշտ կարծել եմ, որ նրանց մեջ ճշմարտություն կա, չէ՞ որ Աստվածաշնչում նշվում է և պատմություններ կան, որ Աստված երազների միջոցով ինչ-որ բաներ է հուշել մարդկանց:

Նա. -Այո, բայց չեմ կարծում, որ այս երազի իմաստը բարի լինի իմ ու քո միասին լինելու հետ կապված:

Ես. -Կապրենք՝ կտեսնենք:

Անցան ամիսներ, ինչքան անցնում էին վայրկյանները, այդքան ավելի շատ էի Նրան սիրում, զգում էի, որ Նա փոխեց ինձ… Նա ինձ տվեց պատասխաններ, որոնք չունեի իմ մեջ, թե կապված հոգևոր աշխարհի հետ, թե աշխարհիկ կյանքի: Սիրում էի այն երկարատև լռությունը, որը հաջորդում էր մեր լուրջ խոսակցություններին, Նա լուռ նայում էր աչքերիս… Ֆիլմերում այդ ժամանակ սովորաբար համբույր է լինում, բայց մեր երկարատև ընկերության ընթացքում մենք երբեք ՉԵՆՔ ՀԱՄԲՈՒՐՎԵԼ: Շատերը կզարմանան և կմտածեն, որ անհնար է, բայց դա այդ «շատերի» խնդիրն է: Ես պատասխանատու էի Նրա համար, գիտեի, որ համբույրը խորացնում է հարաբերությունը, և ինքս իմ մեջ համոզված չէի, որ մենք կդիմանանք մինչև վերջ: Իմ առջև պայման էի դրել, եթե համ-

բուրել Նրան, ապա միայն խորանի առաջ, պսակադրությունից հետո: Ես սիրում էի... սեր՝ նշանակում է մտածել միայն դիմացինիդ բարեկեցության մասին և ոչ մի գործողություն սեփական ես-ի երջանկությունը բավարարելու համար:

Լուրը հայտնեցի ընտանիքիս, քանի որ մի ամսից պիտի ծառայության անցնեի զինված ուժերում: Ուզում էի կտրուկ քայլերի գնալ, եթե Նա է իմ ապագան, ուրեմն թող այդպես լինի: Ընտանիքիս անդամները չէի ասի, որ շատ ուրախացան տարիքային տարբերության պատճառով, բայց կողմ արտահայտվեցին իմ որոշմանը: Հայրս ասաց, որ ամեն դեպքում կողմ է իմ որոշմանը, իսկ մայրս՝ որ եթե հիմա դեմ արտահայտվի, հնարավոր է՝ սխալվի, այնպես որ վստահում է իմ ընտրությանը: Կարծես մի մեծ բեռ ընկավ սրտիցս, բայց դա երկար չտևեց: Ես զանգեցի, որ հայտնեմ այս լուրի մասին իմ սիրելիին, սակայն Նա չպատասխանեց, նույնիսկ տնից դուրս չէր գալիս... Օրեր անցան...

Բջջայինիս զանգ եկավ... Իմ սիրելիի մայրն էր: Ցանկություն հայտնեց հանդիպել, ես էլ մեծ սիրով համաձայնեցի: Հաջորդ օրը ժամը 15:00 այգում պիտի հանդիպեինք: Նա եկավ 30 րոպե ուշացումով: Բայց նրա բարեհամբույր լինելու փաստը մոռացնել տվեց այդ ուշացումը.

-Նոր, դու ի՞նչ նպատակներ ունես:

Ես. -Ինչ նպատակներ ունե՞մ... մարդիկ ի՞նչ նպատակներ կարող են ունենալ, երբ սիրում են:

-Իսկ դու համոզվա՞ծ ես, որ այն կարելի է սեր կոչել:

Ես. -Ինձ մոտ առաջին անգամ է նման բան կատարվում:

-Այդ դեպքում ես կասեմ, որ ձեր սերը ճիշտ հիմքի վրա չի կառուցված:

Ես. -Իսկ ինչո՞ւ եք այդքան համոզված:

-Դու գիտե՞ս, թե ինչպես կարող ես Աստվածաշնչից քեզ հուզող հարցի պատասխանը իմանալ:

Ես. -Այո, հավատով աղոթք անես, հետո բացես պատահական մի էջ, հարցիդ պատասխանը գրված կլինի:

-Մենք երեկ ամբողջ ընտանիքով աղոթեցինք, բայց պատասխանը ձեր օգտին չէր:

...Չգիտեի ինչ ասեի, հասկացա, որ ամեն ինչ արդեն որոշված է, հենց այդ պահին տեսա, որ Նա կանգնած էր այգուց մի փոքր հեռու՝ դիմացի մայթին: Հեռավորությունը մեծ էր, բայց ես տեսա Նրա աչքերը... Նրանք այլևս իմը չէին, դատարկություն կար... այն կապը, որ կապում էր ինձ Նրա հետ, կարծես ինչ որ մեկը անզգուշորեն կտրել էր, և այն այլևս չկար...

-Կարո՞ղ եմ հանդիպել ձեր աղջկա հետ:

-Կարող ես: Ես քեզ շատ եմ սիրում և հարգում, հասկացիր, քո դեմ ոչինչ չունեմ, ուղղակի պիտի հասկանաս. եթե դուք իրար համար չեք, ուրեմն պետք է համակերպվել և ճակատագրական սխալ չանել:

-Շնորհակալ եմ անչափ: Հաճելի էր զրուցել ձեզ հետ, չհաշված, թե ինչի մասին էինք զրուցում...

-Նմանապես:

Ես հեռացա ծանր սրտով՝ մտքումս վերլուծելով ամբողջ խոսակցությունը: Մի՞թե ամեն ինչ կարող է այսպես միանգամից շրջվել իմ դեմ... Բայց մեկ րոպե: Ամեն ինչ դեռ կորած չէ: Հանդիպել է պետք: 2 օր էր մնացել, որ գնայի բանակ:

Նամակ գրեցի նրան. «Ուզում եմ հանդիպենք, մենք քննարկելու թեմաներ ունենք»:

Պատասխանը չուշացավ՝ «Լավ, վաղը արի իմ աշխատասենյակ»:

Ազատությանս վերջին օրն էր... Մեր տանը մեծ անցու-

դարձ էր, բոլորը եկել էին հրաժեշտ տալու և բարեմաղթանքներ հղելու: Իսկ ես նայում էի ժամացույցին… ե՞րբ է գալու այդ ժամը… ի՞նչ կլինի… ի՞նչ կորոշենք… անորոշություն:

Երբ մեր պայմանավորված ժամին մնացել էր 10 րոպե, դուրս եկա տնից և գնացի… այդ պահին ինձ չէր հետաքրքրում սպասվելիք երկու տարին: Ես ուզում էի հասկանալ՝ ի՞նչ կյանք կլինի այդ երկու տարիներից հետո… Երբ հասա այդ դռանը… հին դռանը… սիրտս լցվեց, ախր այնքան հիշողություններ կային, որոնց վկան հենց այդ դուռն է եղել:

Մտնելով սենյակ՝ տեսա, որ Նա նստած էր պատուհանի մոտ: Երբ ինձ նկատեց, աչքերը սրբեց և մոտեցավ.

Նա. -Բարև, ո՞նց ես,- ժպտալով հարցրեց:

Ես. -Չեմ կարող ասել, որ հրաշալի, բայց լավ եմ, դո՞ւ ոնց ես:

Նա. -Ես էլ… Նոր, ես այսօր ուզում եմ ասել…

Ես. -Որ մենք պիտի բաժանվե՞նք:

Նա. -Այո: Կներես ինձ, բայց՝ այո:

Ես. -Իսկ ո՞ւր մնաց սերը:

Նա. -Երբեմն մենք ճիշտ չենք գնահատում այն, ինչ մեզ հետ տեղի է ունենում: Ես սխալ մարդու եմ սիրահարվել:

Ես. -Ուրեմն ես դարձա սխա՞լ մարդ:

Նա. -Ի՞նչ ես ուզում: Դու հասկանո՞ւմ ես, ես քեզանից մեծ եմ 8 տարով, այն իր հետ մի շարք խնդիրներ է բերում:

Ես. -Ի՞նչ խնդիր կարող է բերել:

Նա. -Նոր, մի հարց տամ քեզ, դու ե՞րբ կամուսնանաս ինձ հետ:

Սկսեցի հաշվարկել. բանակ գնամ, գամ էտ՝ երկու տարի, ուսումս ավարտեմ՝ երեք տարի, լավ աշխատանք գտնեմ ու տուն ունենամ՝ ևս երկու տարի:



Ես. -Յոթ տարի անց:

Նա. -Դու լավագույնն ես հաշվարկում՝ յոթ տարի ասելով: Լավ, ասենք թե յոթ տարի անց: Բայց այդ ժամանակ ես կլինեմ 33 տարեկան: Դու դժվարությունների մասին գիտե՞ս:

Նա իրավացի էր. օրեր առաջ մորեղբորս հետ երկար զրուցեցինք այդ թեմայով, նա պատմեց, ինչ բարդություններ կարող են ի հայտ գալ այդ տարիքում, շատ դեպքերում երեխաներ չեն ունենում, ունենալուց էլ մի երեխա, այն էլ զոռով-շառով: Զգալի տոկոս է կազմում նաև մոր մահացության դեպքերը այդ տարիքում առաջին երեխան ունեցողների համար:

Ես. -Ի՞նչ ես առաջարկում:

Նա. -Բաց թող ինձ… Ես չեմ ուզում ոչ քո, ոչ էլ իմ կյանքը խորտակել:

Ես. -Ես մտա քո կյանք, որ քեզ երջանկացնեմ… Սպասիր…

Նա. -Ոչ… ես գնում եմ: Քեզ բարի ծառայություն…

Դու գնացիր... հին դուռը ճայնեց, որ մնաս... և ճռռոցով փակվեց...

Բայց քեզ համար միևնույն էր նրա կանչը... ինչպես որ դռան ետևում կանգնած միայնակ ստվերը... Դու ջնջեցիր մաշված դուռը քո կյանքի օրագրից... և գնացիր օտարության ճանապարհով... դատարկ սենյակում թողնելով անցյալդ... Հիմա մեծ քաղաքում ապագայի փողոցները տանում են քեզ առաջ... այնտեղ, ուր չկան հին դռներ, և դրանց ետևում կանգնած միայնակ ստվերներ... ուր չկան անցյալներով սենյակներ... և միայն ուշ գիշերով, հազվադեպ մենության պահերին քո ականջի մեջ հնչում է այն նույն ճռռոցը, երբ փակեցիր հին դուռը... և նստեցիր օտարության գնացքը... դատարկ սենյակում թողնելով անցյալդ...

Մնացի ինքս ինձ հետ… Այնպիսի զգացողություն էր, կարծես ջրի տակ լինեի… ականջներիս մեջ դժժոց, իսկ աչքերս… ոչինչ չէի տեսնում… Եվ միայն կորցնելով հասկացա, թե իրականում ինչ ունեի…

Տուն գնացի: Լավ էր, որ բանակ պիտի գնայի, այլապես պիտի բացատրեի բոլորին իմ մշտապես բարձր տրամադրության անկման պատճառը…

Բանակ… Առավոտյան բոլորն իրար են խառնված՝ էլ խաշած հավ, էլ հաց ու պանիր, քաղցրավենիք, ծխախոտ և ամեն հնարավոր բան, ինչ կտեղավորվեր պայուսակի մեջ: Ընկերներս բակում իրենց մեքենաներով ինձ են սպասում , բարեկամներս արդեն զինկոմիսարիատում են, իսկ ես… ես քնած եմ: Չէ՞ որ չգիտեմ, երբ հաջորդ անգամ կքնեմ իմ անկողնու մեջ: Չէի էլ ուզում վեր կենալ, երկու տարին մի տեսակ շատ ժամանակ կխլի իմ կյանքից, այդ երկու տարիներին ես կարող էի ինչ-որ գործ սկսել, կայունանալ որպես տղամարդ… Բայց դե ստիպված եմ, ստիպված եմ գնալ և պարտքս տալ հայրենիքիս:

Անցա ծառայության… Ամեն ինչ այնպես չէր, ինչպես ներկայացնում էին մարդիկ: Մինչև չծառայես՝ չես հասկանա, թե ինչ է այն: Բայց բառերով էլ չես կարող բացատրել, ծիծաղելի համեմատություն կլինի՝ դուրս է գալիս, որ սիրո նման մի բան է: Ընկերներ ձեռք բերեցի, ինչի համար չեմ ափսոսում, որ ծառայել եմ: Նրանց հետ 2 տարում մի ամբողջ կյանք ապրեցի: Նրանց հետ ընկերությունը սկսվեց մեր մեջ բռնկված վեճից հետո: Վստահաբար կարող եմ ասել, որ ծառայությանս ընթացքում ամենամեծ ձեռքբերումը իմ ընկերներն են եղել: Միայն Աստվածը գիտի, թե ինչ դժվարություններ ենք միասին տեսել, ցուրտ օրերին դրսում իրար գրկել-քնել, ամեն հարցում իրար օգնել: Ես երջանիկ եմ, որ նման ընկերներ ունեմ: Ծառա-

յությունը նաև լինում է հետաքրքիր, օրինակ՝ կրակայինները: Առաջին անգամ կրակելուց ամբողջ բրիգադում միայն ես վեցից վեց հարյուր տոկոսանոց արդյունք ցույց տվեցի: Հրամանատարը կանչեց իր մոտ և մի բուռ կոնֆետ տվեց, իսկ հաջորդ օրը՝ ազատ արձակում: Ես դուրս եկա, և, բնականաբար, քանի որ դեռ մտքիս մեջ Նա էր, գնացի Նրա աշխատասենյակ…

Ես. -Լավ անցա՞ն օրերդ,- հարցրի նրան:

Նա. -Չգիտեմ:

Ես. -Ո՞նց ես:

Նա. -Չգիտեմ:

Ես. -Ինչ որ գիտես, այդ էլ պատմի:

Նա. -Նոր, մենք էլի սկսում ենք…

Ես. -Առանց ինձ քեզ լավ ե՞ս զգում:

Նա-…

Ես. -Մի քանի օրից կրկին կգամ… կխոսենք… հիմա ժամանակս լրանում է, հազիվ կարողացա հասնել այստեղ…

Վերադարձա զորամաս…

Իմ գրքի այս մասը կարելի է անվանել «Ցավ»… չնայած որ այդ բառը չի համապատասխանում իմ ապրումներին… 4 ամիս անց Նա զանգեց ինձ… Եվ այդ զանգից հետո մինչ այսօր իմ մոտ մեծ վախ է սկսվում, երբ հեռախոսս զանգում է… վախենում եմ, որ կարող է էլի նման զանգ ստանամ… Այդ իսկ պատճառով գրեթե միշտ անհասանելի եմ:

Երբ տեսա, որ զանգել է, շատ ուրախացա, դե ինքներդ պատկերացրեք, ինչպես կուրախանաս, երբ քո սիրելին երկար ընդմիջումից հետո զանգահարում է քեզ, ակամայից մտածում ես, որ կարոտել է…

Նա. -Բարև, Նոր, ո՞նց ես:

Ես. -Լավ, դու ո՞նց ես:

Նա. -Նորմալ… Լսի, լուրջ բան ունեմ ասելու:

Ես. -Ասա, լսում եմ:

Նա. -Հենց հիմա եկել են ձեռքս խնդրելու, ես զանգել եմ քեզնից թույլտվություն ստանամ «այո» ասելու համար: Եթե ուզես, որ ասեմ «համաձայն չեմ», այդպես էլ կլինի… Լսում եմ քո պատասխանը:

Հիշո՞ւմ եք, որ ասում էի՝ սեր նշանակում է սիրել դիմացինիդ ավելի շատ, քան քեզ, և կարևոր չի, թե ոնց՝ նրան դարձնել երջանիկ… ես ընդամենը մի քանի վայրկյանում իմ մտքում վերլուծեցի ամեն ինչ, հիշեցի բոլոր օրերը, մեր ապրած հրաշալի պահերը… և պատասխանեցի.

-Համաձայնվիր…

Այս պատասխանով ես ինձ կոտրեցի…

Նա. - Լավ, եղավ… ապրես, ամեն ինչի համար ապրես շատ… քեզնից շատ բաներ սովորեցի… բայց լսիր, այլևս ոչ մի դեպքում մտքովդ չանցնի հանկարծ ինձ զանգես կամ հանդիպում փնտրես, քեզ երբեք չեմ ների, եթե նման փորձ լինի…

Նա ամեն ինչ ճիշտ արեց… թողեց, որ ամբողջ կյանքում այդպես էլ չհասկանամ, սա ճիշտ քայլ էր, թե՝ ոչ… ամեն դեպքում արածների համար չեն փոշմանում…

Իսկ այդ ժամանակ ես անորոշության մեջ էի, որովհետև հենց նոր ջնջեցի ամեն ինչ իմ ձեռքով, Նա չջնջեց... այսինքն մարդ չկա, որին կարող ես մեղադրել այդ հարցում, միակ մեղավորը ես եմ… Մի քանի օր անց հորաքույրս մահացավ, իսկ մի ամիս անց հորաքրոջս տղան, ով նաև իմ սանիկն էր… Չեմ ուզում իմ ապրումները նկարագրել… ուղղակի գրքի մեջ գրելով մի փոքր ցավից կազատվեմ… Հորաքրոջս տղան մահանալուց հինգ րոպե առաջ կանչում է քրոջը և ասում. «Նորոյին կասես, թող զգույշ լինի, շատ միամիտա, իրան խաբելու են,

տանեն, խփեն»: Եթե անկեղծ լինեմ, այդպես էլ չհասկացա այդ ասածը… Մի պահ թվում էր, թե կխելագարվեմ… Եղավ այնպես, որ այլևս իմաստ չտեսա կյանքս շարունակելու, բայց երբեք նույնիսկ մտքիս ծայրով չանցավ այն դադարեցնելու… Կյանքը սիրում է տալ դժվարություններ անընդհատ փոփոխություն մտցնելով, վերջ ի վերջո նա, ով պատրաստ չի փոփոխության, ուրեմն չի ապրում: Որքան արագ ընդունես փոփոխությունը և առաջ նայես, այնքան երկար կապրես:

Ծառայությունից հետո էլ չավարտվեցին դժվարությունները… եկեք ձեզ հետ միասին այսօրվանից ոչ մի խնդիր չանվանենք դժվարություն: Եկեք անվանենք խոչընդոտ, նայենք իրերին այնպես, ինչպես կան: Նախ առաջին խոչընդոտը, որը պիտի հաղթահարեի, վեց տարվա վատ սովորությանս վերջ դնելն էր՝ ծխելը թողնելը. հիշում եմ, նոր էի գնել մի տուփ ծխախոտ, երբ մտքումս կռիվ գնաց…

Մոն. -Հեյ, ինձ լրիվ մոռացա՞ր: Հետո ինչ, որ քեզ չեմ ընդհատում, թողնում եմ միտքդ ավարտես: Այդ կռիվը ինձ հետ էր, և ես քեզ ասացի. «Եթե պիտի թողնես, ուրեմն այժմյան պահից լավ պահ չկա», իսկ դու գցեցիր ծխախոտը և մինչ այսօր այլևս ոչ մի ծուխ ծխած չկաս, ապրես:

Կան. -Դու ապրես, այն քո որոշումն է եղել, ինչևէ, շարունակեմ… կայացման համար քայլեր ձեռնարկեցի, բայց քանի որ մանր և միջին բիզնեսի հարկերը, մեղմ ասած, ճնշող են, ձեռնարկված ոչ մի քայլ երկար կյանք չէր ունենում: Բայց ես չեմ հանձնվել ու չեմ էլ հանձնվի, ես իմ ընտրած ճանապարհով գնալու եմ մինչև վերջ: Մի հատ լավ խոսք կա՝ «Վերջում միշտ լավա լինում, եթե լավ չի, ուրեմն դեռ վերջը չի»:

Բացի գործնականից, ուզում էի անձնական կյանքում էլ փոփոխություն մտցնել, և այստեղ կանգեցի մի մեծ խնդրի

առաջ… Աղջիկների մոտ դեռ կա այն հին մտածելակերպը, որին ես ծանոթ էի այն տարիներից, երբ իմ երգիչ ընկերոջը հանդիպեցի՝ քյառթու ժամանակներում. աղջիկները մտածում են. «Կարգին աղջիկը առաջին անգամը պիտի մերժի»: Ես արմատներով Եղեգնաձորից եմ, ինչու եմ սա շեշտում, որովհետև ուզում էի հասկանալ, ինչու եմ հիասթափվում, երբ ինձ մերժում են: Երբ ես այլևս չէի առաջարկում, իմ կողմից այլևս ակտիվություն չնկատող առաջարկվողն ինքն էր սկսում ակտիվություն ցուցաբերել, որն արդեն ուշացած էր: Պատճառն այն է, որ եղեգնաձորցիները մի բանը մի անգամ են ասում: Պարզելուց հետո որոշեցի փոխվել և մի անգամով չբավարարվել, ու հանգեցի մի ուրիշ մտքի՝ «Եթե սիրում է՝ ամեն ինչ կանի, որ հասնի»: Ես հիմա անկեղծ ասեմ. երբ աղջկան որևէ տեղ եմ հրավիրում, չի նշանակում, որ նրան սիրում եմ, ու ընդհանրապես չեմ հասկանում, ոնց կարող ես սիրել, եթե մի քանի անգամ ես տեսել ու հաշված նախադասություններով փոխանակվել: Ուրեմն այդ սեր անվանել չի կարելի: Այն ավելի շատ հրապուրանք է. ուղղակի հավանում ես նրա արտահայտած մի քանի մտքերը և կարծում, որ նա իրոք շատ մաքուր ներաշխարհ ունի, և միայն այն պարզելուց հետո կարող ես ինչ-որ զգացմունք ձևավորել:

Իմ գրքի այս հատվածը ուզում եմ անվանել «երջանկություն»: Ես բոլորովին վերջերս հասկացա, որ իրականում ես երջանիկ եմ, շրապատված եմ ինձ սիրող մարդկանցով (բայց քանի որ միշտ նորերին էի փնտրում, նրանց հանդեպ ուշադիր չէի), ունեմ լավ ընկերներ և ընտանիք, բարեկամներ, որոնց շատ եմ սիրում, սանիկներ… Փառք քեզ, Տեր Աստված, որ թույլ չտվեցիր սատանային իրագործի իր խոսքերը, ճիշտ է, դեռ չեմ գտել իմ կողակցին, բայց ես լավ գիտեմ, որ Դու ինձ

մոտ մի հրաշքի կուղարկես: Երբ տարիներ անց տեսա իմ նախկին ընկերուհու ընտանիքի նկարները, նրա հրաշք աղջկան, հասկացա, որ նա երջանիկ է… ու նաև հասկացա, որ երջանկությունս այդ պահին կրկնապատկվեց: Երբ ես գրում էի այս գրքի առաջին տողերը, պատկերացում չունեի, թե մինչև այն վերջացնելը որքան բան հասկացած կլինեմ, ուղղակի վերապրելու շնորհիվ: Մանրուքներ, որոնք երբեք ուշադրության չէին արժանացել, հիմա հիշում եմ ու հասկանում… Փառք քեզ, Տեր, որ հասկացրիր ինձ, որ երջանիկ եմ: Առաջ խելք չունեի գլխիս մեջ, իսկ հիմա՝ առավել ևս: Ես Նորոն եմ, NMG-ն, իմ մազերը թափված են, բայց ինչպես ասում է իմ ծանոթ բարմենների մեկը, «ոսկու հանքի վրա խոտ չի աճում...»: Շնորհակալություն ընթերցելու համար, եթե դու ընթերցում ես այս գիրքը, ուրեմն քո մարդկային հատկանիշները դրված են շատ բարձր կետի վրա, այլապես ուղղակի այն քեզ չէր հասնի: Շնորհակալություն լավ մարդ լինելու համար:

Գեղամ Միրզոյան

ՆՈՐԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՅԵԼԻ

Կենսագրական վեպ

Էսքիզները՝ նկարիչ Էդգար Եփրիկյանի

«Նոյյան Տապան Հոլդինգի» հրատարակչություն
Հրատարակչության խմբագիր՝
Գ. Առաքելյան
Էջադրումը և կազմը՝
Դ. Գրիգորյանի

«Նոյյան Տապան» տպագրատուն
Թուղթը՝ օֆսեթ, 60X84 1/16
Ծավալը՝ 3.75 տպ. մամուլ,
ՀՀ, Երևան 0009, Իսահակյան 28
Էլ. փոստ՝ design-nt@mail.ru
Կայք՝ http://www.nt.am

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.